ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՂԱԶԱՆՉՅԱՆ ԼԻԼԻԹ ԱՐՄԵՆԻ

ԱՆՁԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ. ՍԱՀՄԱՆԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ԺԲ.00.02. - «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի համար

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2026

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

КАЗАНЧЯН ЛИЛИТ АРМЕНОВНА

ПРОБЛЕМЫ ПРАВОВОГО ПОЛОЖЕНИЯ ЛИЧНОСТИ: КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОЕ ИССЛЕДОВАНИЕ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени доктора юридических наук по специальности 12.00.02- Публичное право (конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление)

ЕРЕВАН-2026

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական խորհրդում

Գիտական խորհրդատու՝ Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գառնիկ Հրաչիկի Սաֆարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գևորգ Բալաբեկի Դանիելյան

Իրավաբանական գիտությունների դոկտոր
Արմեն Ռուբիկի Հարությունյան

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Նանա Ալիևի Անտոնովա

Առաջատար կազմակերպություն՝ **Երևանի պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի հունիսի 11-ին՝ ժամը 16^{00}-ին, Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051,ք. Երևան, Հովսեփ Էմին 123):
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գիտական աշխատողների գրադարանում:
Սեղմագիրն առաքվել է 2026 թվականի մայիսի 8-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
Իրավաբանական գիտությունների թեկնածու **Ջ.Հ.Հայրապետյան**

Тема диссертации утверждена на Ученом совете Института философии, социологии и права НАН РА

Научный консультант: доктор юридических наук, профессор
Гарник Грачикович Сафарян

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор
Геворг Балабекович Даниелян

доктор юридических наук
Армен Рубикович Арутюнян

доктор юридических наук, профессор
Нана Алиевна Антонова

Ведущая организация: **Ереванский государственный университет**

Защита состоится 11-го июня 2026 г. в 16^{00} часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции Комитета по высшему образованию и науке РА, действующего при Российско-Армянском университете (0051, г. Ереван, ул. Овсепа Эмина 123).
С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Российско-Армянского университета.
Автореферат разослан 8-го мая 2026г.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук **Дж. А.Айрапетян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտություն թեմայի արդիականությունը. Արդի համաշխարհայնացման ժամանակաշրջանում անձի իրավական դրությունը, վերջինիս տարրերի դրսևորման առանձնահատկությունները հանդիսանում են ժամանակակից ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետության կայացման և զարգացման կարևորագույն նախադրյալ: Հայտնի է, որ անձի իրավական դրությունը բարդ սոցիալական, իրավական նշանակություն ունեցող երևույթ է, որն իր տարրերի հետ միասին, տարբեր պատմական ժամանակաշրջաններում օժտված էր տարաբնույթ դրսևորումներով և կարգավիճակներով: Հարկ է նշել, որ «անձ-հասարակություն-պետություն» փոխհարաբերության համակարգում անձի իրավական (սահմանադրաիրավական) դրության հետ կապված հիմնախնդիրները և դրանց հետևանքները անմիջական և էական ազդեցություն ունեն համաշխարհային և ներպետական տնտեսության, քաղաքականության և իրավունքի բնականոն զարգացման վրա: Դրանց ազդեցությունից զերծ չի մնացել նաև սահմանադրական իրավունքը, որի կառուցվածքում անձի իրավական դրության կատեգորիան հանդիսանում է համախմբող, համակարգող հասկացություն, որը ներառում է անձի՝ որպես իրավունքի սուբյեկտի, սոցիալ-իրավական հատկանիշների ուսումնասիրությունը, որպես իրավական անձի գործառնության օրինաչափությունները, էվոլյուցիոն զարգացման հիմանական ուղենիշները և հեռանկարը և այլ հարակից հիմնահարցերը: Հետևաբար, իրավագիտության, այդ թվում՝ սահմանադրական իրավունքի գիտության հրատապ խնդիրներից է հասարակությունում և պետությունում ծագած անձի սոցիալ-իրավական դրության հիմնախնդիրների լուծումը: Տվյալ դեպքում, ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետությունը պարտավոր է երաշխավորել (պաշտպանել և պահպանել) մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ հետխորհրդային ժամանակներից ի վեր, հայրենական իրավագիտությունում անձի իրավական դրության հիմնախնդիրները պատշաճ ուսումնասիրության չեն ենթարկվել: Մասնավորապես, ուսումնասիրվել և մեկնաբանվել են «իրավական դրություն» հասկացությունն ու դրա տեսակները, սակայն գրեթե անդրադարձ չի կատարվել անձի իրավական դրության բուն էությանն ու բովանդակությանը, հիմնական տարրերին և դրանց դրսևորման առանձնահատկություններին: Ավելին, հայրենական իրավագետների ուշադրությունից զերծ են մնացել, հատկապես օրինական շահերի, անձի իրավական դրության հիմնական դրսևորումների, ինչպես տեսական, այնպես էլ օրենսդրական վերլուծությանը նվիրված գիտագործնական և միջգիտակարգային հետազոտությունները: Հետևաբար, անձի իրավական դրության սահմանադրաիրաիրավական հետազոտությունը հանդիսանում է օբյեկտիվ անհրաժեշտություն: Հատկանշական է, որ անձի իրավական դրության տարրերի տարաբնույթ դրսևորումներն, իրենց անմիջական ազդեցությունն են թողնում քաղաքացիական հասարակության, ակտիվ շարժումների ձևավորման և զարգացման վրա, որոնք էլ իրենց հերթին թելադրում են ժողովրդավարության դրսևորման առանձնահատ-

կությունները տվյալ հասարակությունում և պետությունում: Միևնույն ժամանակ, արդի ժամանակաշրջանի ներպետական մարտահրավերներից է անձի իրավական դրության երաշխավորված պաշտպանությունը, որին պետք է նպաստեն նաև առաջիկա սահմանադրական և դատաիրավական բարեփոխումները, դրանց նվիրված ռազմավարության ծրագրի իրականացումը: Մասնավորապես, ՀՀ սահմանադրության նոր հայեցակարգով նախատեսվում է ընդլայնել ՀՀ Ազգային ժողովի վերահսկողական գործառույթները, հաստատել իշխանության թևերի ավելի մեծ ապակենտրոնացում և հավասարակշռում, ինչպես նաև դիտարկել անձին, նրա իրավունքներն ու ազատությունները՝ որպես ժողովրդավարության առանցք:

Ընդհանրապես, անձի իրավական դրության ապահովման հիմնախնդիրը հանդիսանում է, ինչպես ընդհանուր իրավագիտության, այնպես էլ ճյուղային՝ սահմանադրական իրավունքի գիտության խնդրահարույց հարցերից մեկը: Հետևաբար, անձի իրավական դրության համալիր և համակարգված գիտական ուսումնասիրությունը խիստ արդիական է ներկայանում հատկապես արդի հայ հասարակության և պետության զարգացման տեսանկյունից: Այս առումով, անհրաժեշտ է արձանագրել, որ անձի իրավական դրության հիմնախնդիրների համակողմանի սահմանադրահիրավական վերլուծությունը, հնարավորություն է ընձեռում գտնել նոր լուծումներ անձի իրավունքների, ազատությունների, օրինական շահերի և անձի իրավական դրության այլ կառուցվածքային տարրերի արդյունավետ պաշպանության և իրացման գործընթացում: Այսպիսով, կարելի է փաստել, որ վերոնշյալ հանգամանքներով են պայմանավորված թեմայի ընտրության անհրաժեշտությունն ու հետազոտության արդիականությունը:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը. Եթե 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբներին իրավագիտությունում, որպես կանոն, անտեսված էր անձի իրավական դրության հիմնախնդիրների և առանձնահատկությունների խորքային ուսումնասիրությունը, իսկ դրա առանձին տարրերի ուսումնասիրություններն արտացոլվել են հիմնականում ռուս գիտնականներ՝ Ի.Ա. Իլինի, Վ. Ն. Լատկինի, Ն.Մ. Կորկունովի, Յ.Ա.Գամբարովի, Գ.Ֆ. Շերշենևիչի, Ն.Ս. Տագանցևի, Ե.Ն.Տրուբեցկոյի աշխատություններում, ապա խորհրդային ժամանակաշրջանի 1950-1960-ական թվականների իրավագիտությունում «անձի իրավական դրության» հասկացությունը զուգորդված էր «իրավաբանական փաստեր» հասկացության հետ (Ս.Ն. Բրատուս, Ա. Վ. Կուրիլով, Ա. Յա. Վիշնևսկի, Է. Կ. Տոլստոյ): Հետագայում (1960-1990թթ.) «իրավական դրության» հասկացությունը նույնականացվում էր իրավասուբյեկտության կամ անձի իրավունքների հետ: Ավելին, իրավագետների ուշադրությունը սևեռված էր անձի իրավական դրության առանձին տարրերի ուսումնասիրության վրա, այդպիսով երկրորդական համարելով անձի իրավական դրության բովանդակային և կառուցվածքային տարրերի լիարժեք (ամբողջական) հետազոտությունը: Տվյալ խնդիր ուսումնասիրության մեջ էական ներդրում են ունեցել՝ Ս.Ս. Ալեքսեևը, Յ.Ռ. Բոյարսը, Ս. Ն. Բրատուսը, Ա.Ա. Երշովան, Օ.Ս. Իոֆֆեն, Ռ.Օ. Խալֆինան, Ս.Ֆ. Կեչեկյանը, Դ.Ա.Կերիմովը, Վ.Վ. Կոպեյչիկովը, Ռ.Ե. Ղուկասյանը, Ա.Վ. Մալկոն, Ն.Ի. Յամպոլսկայան, Լ.Ա. Յավիչը, Պ.Ե. Նեդբայլոն,

Վ.Ս. Ներսեսյանցը, Վ.Ս. Նովոսյոլովը, Մ. Դ. Շարգորոդսկին, Վ.Ս. Շևցովը, Դ.Մ. Չեչոտը, Վ. Ա. Պատյուլինը, Ի. Ս. Սամոշենկոն, Մ.Ս.Ստրոգովիչը, Զ.Ի. Սուշիկը, Ի. Ե. Ֆարբերը, Ժ. Լաբրիերը, Դ.Կենոնը, Ե. Պատտարոն, Գ. Սոոմանը, Գ. Օրսալը և այլոք: Հետխորհրդային իրավագիտությունում փոխեփոխ սկսվում են լուսաբանվել նոր տեսակետներ լոկ իրավական դրության կառուցվածքային տարրերի՝ անձի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ: Ընդորում, ամբողջությամբ չի ուսումնասիրվել անձի իրավական դրության փոխկապակցվածությունը անձի սահմանադրաիրավական կարգավիճակի, հիմնական իրավունքների, ազատությունների և պարտականությունների հետ: Տվյալ խնդրի տարբեր տեսանկյունները լուսաբանվել են այնպիսի հեղինակավոր իրավաբան-գիտնականների աշխատություններում, ինչպիսիք են՝ Բ.Ս.Էբզևը, Վ.Վ.Լազարևը, Ռ.Լ.Խաչատուրովը, Վ.Ա.Կարտաշկինը, Օ.Ե.Կուտաֆինը, Մ.Ն.Մալեինը, Հ.Հ. Մայելմանը, Ա. Գ. Ռոբինսոնը, Դ.Ռ.Վինսենտը, Ն.Վ. Վիտրուկը, Լ.Դ.Վոևոդինը, Յ.Ա. Տիխոմիրովը և այլոք:

Անձի իրավական դրության հայեցակարգային զարգացման նորագույն փուլը 2000-թվականից ի վեր նշանավորվեց անձի իրավունքների և ազատությունների բնագավառում նոր գիտական հետազոտություններով, ինչպես հայրենական, այնպես էլ ռուսական և արևմտյան գիտնականների աշխատություններով: Հարկ է նշել, Ս.Ս. Ավետիսյանի, Վ.Ն. Այվազյանի, Գ.Մ. Բաղիրյանի, Ա.Հ. Երիցյանի, Գ.Գ. Հարությունյանի, Մ. Հ. Մուրադյանի, Ա. Ս. Ղամբարյանի, Գ.Հ. Սաֆարյանի, Հ.Մ.Ստեփանյանի, Ս.Գ. Վաղարշյանի, Մ.Ի. Բայդենի, Յու. Վ. Բարզիլովայի, Վ.Պ. Բասկինի, Ե.Ա. Լուկաշեվայի, Օ.Մ. Մարտիշինի, Ս.Վ. Նարուտտոյի, Մ.Վ.Պերշինի, Վ.Վ.Պետրովիչի, Ս.Վ.Պելենինի, Ի.Բ. Պոնոմարյովի, Ա.Ա. Պրոնինի, Ի. Ս. Սուբիտովայի, Ե.Ս. Սմիրնովի, Լ.Ի.Սպիրիդոնովի, Վ.Մ.Սիոիխի Լ. Ա. Տխաբիսիմովայի աշխատությունները: Անձի իրավական դրության անմիջական ուսումնասիրության վերաբերյալ աշխատություններ նաև ներկայացրել են Կ. Ատիուսի, Ա.Դեվերսի, Դ. Ձենոկսի, Ջ. Հաբերմասի, Գ.Լոբայի, Պ. Լամբետի, Մ.Լեվինների, Ժ.Պ.Մարգրունոյի, Մ. Պերրեյի, Դ. Ռաֆայելի, Պ.Ռուբիերի, Ֆ.Սուդրոյի, Ֆ.Տերրեյի, Մ.Ֆաբրե-Մադանի, Հ. Ֆուլշիզոնի, Դ.Շոլտերի և այլ գիտնական-իրավաբանների կողմից: Հարկ է նշել, որ չնայած վերոնշյալ հեղինակների բազմաթիվ ուսումնասիրություններին և մշակումներին դեռևս բացակայում է ամբողջական ամփոփ հետազոտություն անձի իրավական դրության համալիր հիմնախնդիրների բացահայտման վերաբերյալ: Մասնավորապես, համապարփակ ուսումնասիրություն են պահանջում անձի իրավական դրության կառուցվածքային տարրերի, տեսակների և սկզբունքների տարանջատման, իրավական կարգավիճակի իրացման իրավաբանական երաշխիքների վերաբերող դրույթները, ինչպես նաև հետազոտություններ՝ նվիրված անձի իրավական դրության պահպանությունն ու պաշտպանությունը երաշխավորող ներպետական և վերազգային համակարգերին: Այս առումով, սույն ատենախոսական աշխատանքը իր էությամբ միջառարկայական հետազոտություն է, որը պարունակում է անձի իրավական դրության հետ կապված համալիր հիմնախնդիրների հիմնարար ուսումնասիրություն:

Հետազոտության մեթոդաբանության հիմունքները. Սույն ատենախոսության գիտագործնական հետազոտության մեթոդաբանությունը հիմված է անձի իրավական դրության ձևավորման և զարգացման վրա ազդող պետական և իրավական երևույթների, իրավական ակտերի գիտական ուսումնասիրության տրամաբանության վրա: Սույն ուսումնասիրության մեթոդաբանական հիմքն են կազմում գիտական ճանաչողական համընդհանուր մեթոդները (վերլուծություն և սինթեզ, դեդուկցիա և ինդուկցիա), ինչպես նաև մասնավոր ու հատուկ մեթոդները (սոցիոլոգիական, տնտեսական, հոգեբանական, երևույթների քանակական ու որակական վերլուծությունն ու դասակարգում, ձևական-իրավաբանական, իրավահամեմատական, իրավաբանական վերլուծության և այլն): Համագիտական և մասնավոր (հատուկ) մեթոդների օգնությամբ բացահայտվել են հետազոտության թեմայի էությունը, բովանդակությունը և մարդու իրավական կարգավիճակի հետ կապված հիմնախնդիրների առանձնահատկությունները:

Հետազոտության տեսական հենքը. Սույն հետազոտության հիմքում ընկած են իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի գիտակարգերի գծով աշխատությունները, որոնք տեսական և մեթոդաբանական զգալի նշանակություն են ունեցել թեմայի հետազոտության հարցում: Այս առումով ատենախոսական աշխատանքի տեսական հիմք են հանդիսանում իրավաքաղաքական մտքի պատմության, իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի հետևյալ հեղինակների՝ Սոկրատեսի, Պլատոնի, Արիստոտելի, Թովմաս Աքվինացու, Մխիթար Գոշի, Ն.Մաքիավելի, Բ.Սպինոզայի, Հ. Գրոցիուսի, Թ.Հոբսի, Ջ. Լոկի, Շ. Մոնտեսքիոյի, Ժ.Ժ. Ռուսոյի, Թ. Ջեֆերսոնի, Թ. Փեյնի, Ի. Կանտի, Գ.Հեգելի, Վ.Ն. Այվազյանի, Ա.Ա. Ավագյանի, Վ.Ս. Ներսեսյանցի, Ա.Հ. Երիցյանի, Գ.Գ. Հարությունյանի, Գ.Հ. Սաֆարյանի, Բ.Ս.Էբզեևի, Ն.Վ. Վիտրուկի, Վ.Դ. Զորկինի, Վ.Ա. Կարտաշկինի, Դ.Ա.Կերմովի, Ե.Ա.Լուկաշևայի, Ա.Վ. Մալկոյի, Գ.Վ. Մալդնի, Տ. Էվունսի, Դ.Դ. Ռաֆայելի, Ռ. Ռոկամոտայի, Ռ.Վիլսոնի, Գ.Ֆուլշիրոնի և այլոց աշխատանքները:

Հետազոտության օբյեկտն ու առարկան. Հետազոտության **օբյեկտ** են հանդսանում այն հասարակական հարաբերությունները, որոնց կիզակետում անձն է և որոնք, անմիջականորեն կապված են անձի իրավական դրության, վերջինիս անկապտելի տարրերի իրականացման հետ: Հետազոտության **առարկա** են հանդիսանում անհատի իրավական կարգավիճակի համակարգը, ինչպես նաև ընդհանուր իրավական, սահմանադրական զարգացման օրինաչափությունները, որոնք նպաստում են կոնկրետ հասարակության և պետության մեջ անհատի իրավական դրության ծագմանը, զարգացմանն ու վերջինիս տարրերի իրացմանը:

Հետազոտության նպատակն ու խնդիրները. Ատենախոսության հետազոտության հիմնական **նպատակն է** սահմանադրաիրավական բազմակողմանի, համապարփակ, ամբողջական և քննական վերլուծության ենթարկել անձի իրավական դրության սոցիալ-իրավական էությունը, առանձնահատկությունները, մարդու իրավունքների, ազատությունների և պարտականությունների արդի հայեցակարգային մոտեցումները, ներկայացնել «անձի իրավական դրության» հասկա-

ցության սահմանադրահիրավական ամրագրման, դրա տարրերի պահպանության և պաշտպանության ներպետական օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկներ, ինչպես նաև առաջարկել հեղինակային հայեցակարգային մոտեցում «անձի իրավական դրության» կատեգորիայի կատարելագործման վերաբերյալ ժողովրդավարական իրավական պետությունում:

Հիմնական նպատակին հետամուտ, հեղինակը փորձել է լուծել հետևյալ **խնդիրները.**

- սահմանել «անձի իրավական դրության» հասկացությունը, բովանդակությունը, վերջինիս իրավաբանական կառուցվածքն ու դրանից բխող առանձնահատկությունները,
- բացահայտել անձի՝ որպես բիոսոցիալական էակի վերաբերյալ ժամանակակից մոտեցումները,
- բացահայտել քաղաքացիության՝ որպես անձի իրավական դրության նախադրյալի ողջ լուսապատկերի ձեռքբերման յուրահատուկ առանձնահատկությունները և արդի հիմնախնդիրները,
- ներկայացնել անձի իրավասուբյեկտության սոցիալական հիմքերը, իրավաբանական բովանդակությունը և վերջիններից բխող հիմնախնդիրները,
- լուսաբանել անձի արժանապատվությունը, որպես իրավունքների և ազատությունների անքակտելի հիմք,
- պարզաբանել անձի իրավական դրության հետ կապված հիմնահարցերը իրավակարգավորման ոլորտում,
- հետազոտել անձի իրավական դրության սկզբունքների բովանդակությունը և սոցիալ-իրավական նշանակությունը
- վերհանել անձի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի և պարտականությունների փոխներգործության հետ կապված հիմնախնդիրների առանձնահատկությունները իրավակարգավորումների ոլորտում,
- բացահայտել անձի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի և պարտականությունների փոխհարաբերակցության արդի հիմնախնդիրները,
- բացահայտել անձի իրավական դրության իրացման սոցիալական և սահմանադրահիրավական երաշխիքների համակարգը:

Հետազոտության նորմատիվ-իրավական և փորձառական հիմք են՝ միջազգային և ներպետական նորմատիվ իրավական ակտերը, այդ թվում՝ միջազգային իրավական ակտերն ու փաստաթղթերը, ՀՀ Սահմանադրությունը, բարձրագույն դատական ատյանների որոշումները, (ՄԻԵԴ, ՀՀ Սահմանադրական դատարան, ՀՀ Վճռաբեկ դատարան) և այլ էմպիրիկ նյութեր, որոնք նպաստել են սույն ատենախոսական աշխատանքի արդյունքների և եզրակացությունների հիմնավորվածությանը, արժանահավատությանը, օբյեկտիվությանը, ինչպես նաև հետազոտության արդյունքների հավաստիությանը:

Հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ հեղինակը հայրենական իրավագիտությունում առաջին անգամ համակողմանի և համակարգված վերլուծության է ենթարկել անձի իրավական դրության, այդ թվում՝

սահմանադրաիրավական կարգավիճակի խնդրահարույց հարցերը՝ սահմանադրական իրավունքի տեսանկյունից: Սույն համալիր հետազոտությունը հնարավորություն ընձեռեց առավել խորքային ուսումնասիրություն իրականացնել, ներառելով անձի իրավական դրության բոլոր կառուցվածքային տարրերը: Հետազոտությունում հիմնավորվում է այն ***հեղինակային մոտեցումը***, ըստ որի, անձի իրավական դրությունը ազգային-իրավական համակարգի առանցքն է, քանի որ իրավական համակարգի մյուս բաղադրիչները կոչված են ապահովվելու անձի ինքնավար կարգավիճակը, նրա անձնական անվտանգությունը, իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը: Անձի ինքնավար կարգավիճակից է բխում նրա սոցիալական պատասխանատվությունը հասարակության և պետության առաջ, պատասխանատու վերաբերմունքն իր վարքագծի և այլոց իրավունքների և ազատությունների հանդեպ: Հեղինակը գիտականորեն հիմնավորել և ճշգրտել է անձի իրավական (սահմանադրաիրավական) դրության տարրերի դերն ու նշանակությունը ժողովրդավարական, իրավական պետությունում, ինչպես նաև պետություն-հասարակություն-անհատ եռամիասնության ու փոխկապվածության շրջանակում բացահայտել է յուրաքանչյուրի իրավական ազատության սահմանները և միմյանց հանդեպ իրավական և բարոյական պարտականությունները: Հիմնվելով ազգային և միջազգային իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի քննական վերլուծության արդյունքների վրա, հեղինակը հայրենական իրավաբանական գիտության մեջ առաջին անգամ բացահայտել է նաև անձի իրավական դրության դրսևորման առանձնահատկությունները իրավակարգավորման և իրավակիրառ ոլորտներում: Բացի վերոնշյալից, հեղինակը առաջին անգամ բացահայտում է «անձի իրավական դրության», «անձի սահմանադրաիրավական դրության», «անձի օրինական շահեր», «անձի սոցիալական պատասխանատու դրության» և հարակից այլ կատեգորիաների սոցիալ-իրավական հիմքերն ու բովանդակությունը:

Գիտական նորույթի տարրեր են պարունակում նաև **պաշտպանության ներկայացվող դրույթները**, որոնք հանգում են հետևյալին.

1. «Անձի իրավական դրություն» հասկացությունը բարդ ու բազմաշերտ սոցիալ-իրավական երևույթ է, որն իր ուրույն տեղն է զբաղեցնում ոչ միայն պետության և իրավունքի տեսության, այլև սահմանադրական իրավունքի գիտակարգերում, դրանով իսկ ընդգծելով հիմնախնդրի համընդհանուր-իրավական բնույթը: Այս առումով, *որպես գիտական նորույթ հեղինակը հիմնավորում է «անձի իրավական դրություն» հասկացության սահմանադրական ամրագրման անհրաժեշտությունը,* ինչն ամրապնդում է ժողովրդավարության սկզբունքները, նպաստելով մարդու իրավունքների երաշխավորման և պաշտպանության գործուն կառուցակարգերի ներդրմանն ու կիրառմանը: Հեղինակը ներկայացնում և հիմնավորում է, որ «անձի իրավական դրություն» հասկացությունը բազմաթիվ ժողովրդավարական, իրավական պետություններում օրենսդրական ամրագրում չի ստացել, որի հետևանքով առաջանում են անհաղթահարելի խոչընդոտներ անձի իրավունքների, ազատությունների, օրինական շահերի, քաղաքացիության, ինչպես

նաև իրավասուբյեկտության հարցերի պարզաբանման շուրջ ոչ միայն սահմանադրական իրավունքում, այլև իրավակիրառ պրակտիկայում: Հետևաբար, հեղինակն առաջարկում է անձի իրավական դրության հասկացությունը ամրագրել ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխում հետևյալ տեսքով.

<u>Հոդված 81.1 Անձի իրավական դրությունը</u>

1) Անձի իրավական դրությունը, նրա փաստացի վիճակն է տվյալ հասարակության և պետության մեջ, որն ավելի կամ պակաս լրիվությամբ (կախված պետության կառավարման ձևից և քաղաքական ռեժիմից) իր արտացոլումն է գտնում իրավունքում, ճանաչվում և պաշտպանվում է պետության կողմից:

2) Սույն գլխի դրույթները հանդիսանում են Հայաստանի Հանրապետությունում անձի իրավական դրության հիմքը և ենթակա չեն փոփոխման այլ կարգով, քան հանրաքվեի միջոցով:

2. Սույն հետազոտությունում դիտարկելով անձի իրավական դրության տարրերի դրսևորման սոցիալ-իրավական առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց վերաբերյալ տարաբնույթ մեկնաբանություններն ու հայեցակարգերն, հիմնավորում է, որ անձի իրավական դրությունը անցել է ձևավորման և զարգացման բարդ և յուրօրինակ ընթացակարգ և պատմական տարբեր ժամանակաշրջաններում օժտված է եղել տարաբնույթ իրավական և սոցիալական դրսևորման առանձնահատկություններով: Ավելին, անձի իրավական դրություն կատեգորիան հանդիսանում է ազգային-իրավական համակարգի առանցքը, որի շուրջ ձևավորվում են իրավական համակարգի մյուս բաղադրիչները, քանի որ հեղինակը անձի իրավական դրությունը դիտարկում է ոչ միայն պոզիտիվ, այլև բնական իրավունքի դիրքերից: Հետևաբար, ազգային-իրավական համակարգի բնույթն ու բովանդակությունը, առաջին հերթին, բխում է անձի իրավական դրության էությունից:

3. Ատենախոսությունում, որպես հայրենական իրավագիտության մեջ նորույթ, կատարված բազմակողմանի ուսումնասիրությունների հիման վրա *առաջին անգամ բացահայտվում են «անձի իրավական դրություն» և «անձի իրավական կարգավիճակ» հասկացությունների ընդհանրություններն ու տարբերությունները*: Թեպետ, ժամանակակից իրավաբանական գրականությունում այդ երկու հասկացությունները հաճախ նույնականացվում են, սակայն, հեղինակի կատարած համապարփակ ուսումնասիրությունները վկայում են, որ «անձի իրավական դրությունը» ավելի լայն և ընդգրկուն հասկացություն է, որը ներառում է իրավահարաբերության սուբյեկտին բնորոշ բոլոր երևույթները, իսկ վերջինիս հիմքում, բոլոր տարրերի հետ մեկտեղ, ընկած է «անձի իրավական կարգավիճակ» հասկացությունը: Ավելին, այդ երկու հասկացությունները փոխհարաբերվում են որպես ընդհանուրը («անձի իրավական դրություն») մասնակիին («անձի իրավական կարգավիճակ»):

4. Ատենախոսությունում հիմնավորվում է, որ անձի իրավական դրության սկզբունքներն այն հիմնարար ելակետային դրույթներն են, որոնք սահմանադրորեն ամրագրում են պետության և անհատի միջև հարաբերությունների էական առանձնահատկությունները, ինչպես նաև պետության և անհատի փոխադարձ

պատասխանատվության հիմքերը: Հետազոտությունում հեղինակի կողմից համակարգված եղանակով ներկայացվել են արդի իրավագիտությունում գոյություն ունեցող սկզբունքները, որոնց պրակտիկ իրականացումը բախվում է մի շարք հիմնախնդրների անձ-հասարակություն- պետություն փոխհարաբերության համատեքստում:

5. Ատենախոսությունում անձի իրավական դրության տեսակների վերաբերյալ իրավագետների կարծիքները ներկայացնելու հետ մեկտեղ, հեղինակը բացահայտում է նախկինում անտեսված կամ սակավ ուսումնասիրված իրավական դրության տեսակների առանձնահատկությունները, վերհանելով վերջիններիս կիրառման յուրօրինակության ազդեցությունը ժողովրդավարական, իրավական պետությունում անձի իրավական դրության ձևավորման և զարգացման, ինչպես նաև «անձ-պետություն-հասարակություն» եռամիասնության փոխհարաբերությունից բխող իրավահարաբերությունների վրա: Այսպես, հեղինակը հիմնավորում է, որ արդի իրավունքի գլոբալացման ժամանակաշրջանում տեսական և գործնական հետաքրքրություն են առաջացնում այն իրավական դրության տեսակների ուսումնասիրությունը, որոնց հիմքում ընկած են մարդկային չափումների սոցիալական բաղադրիչները: Այս առումով, հեղինակն, որպես *գիտական նորույթ, հիմնավորում է*, որ անձի իրավական դրության կառուցվածքային տարրերի՝ անձի իրավունքների, ազատությունների, օրինական շահերի, պարտականությունների ամբողջությունը, ինչպես նաև քաղաքացիությունն ու իրավասուբյեկտությունը, հանդիսանում են համընդհանուր իրավաբանական բնույթով օժտված սահմանադրական համակարգի բաղադրիչ սոցիալական արժեքներ:

6. Հեղինակը հիմնավորում է, որ իրավասուբյեկտությունը, որպես անձի իրավական դրության հիմնատարր, իր էական ազդեցությունն է թողնում ժողովրդավարական, իրավական պետությունում և քաղաքացիական հասարակութ-յունում անձի իրավական դրության ամրապնդման, անձանց մոտ կամքի ազատության ձևավորման և զարգացման վրա: Ավելին, տվյալ հիմնախնդրի բացահայտման շրջանակներում ներկայացվում է *հեղինակային մոտեցում դելիկտաունակության էության բացահայտման*, ինչպես նաև վերջինիս գործունա-կության և իրավունակության հետ համընկման պահի վերաբերյալ:

7. *Հեղինակը, դիտարկելով քաղաքացիության ինստիտուտը որպես անձի սահմանադրաիրավական դրության ձեռքբերման և իրացման առանձնահատուկ նախադրյալ*, ընդգծել է վերջինս կարևորությունը պետություն-անհատ փոխհարաբերություններում, որտեղ քաղաքացիությունը նաև հանդես է գալիս որպես պետության և անձի միջև հատուկ սահմանադրական-իրավական կապ: Ավելին, ատենախոսությունում քննարկվում է իրավագիտության վիճահարույց հարցերից մեկը՝ իրավունքների, ազատությունների և պարտականությունների ծավալը, որով օժտված է անձը, որպես կոնկրետ պետության քաղաքացի:

8. Անձի իրավական դրության շրջանակներում իրավունքների և ազատությունների վերլուծության հիման վրա, որպես *հայեցակարգային նորույթ,* առաջարկվում է նրանում ընդգրկել ոչ միայն հիմնական, սահմանադրական

իրավունքները, այլև միջազգային իրավական և ներպետական ակտերից բխող բոլոր իրավունքների համայնապատկերը: Ավելին, «անձի հիմնական իրավունքներ» հասկացության վերլուծությունը հաստատում է այն ճշմարտությունը, որ անձի հիմնական սահմանադրական իրավունքները հանդիսանում են սուբյեկտիվ իրավունքներ, որոնց բովանդակային հատկանիշների վերլուծությունը և դասակարգումը ատենախոսությունում լույս են սփռում արդի անձի իրավական դրության հայեցակարգի հիմնախնդիրների վրա:

9. Անձի արժանապատվության ճանաչումը՝ որպես համապարփակ և բացարձակ սահմանադրական արժեք, պետության կողմից պաշտպանվող սահմանադրական դրույթ, հանդիսանում է արդի ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետության հրամայականը: Իրենց հերթին, «արժանապատվություն» և «արժանապատիվ կյանք» հասկացությունները, որպես սոցիալական երևույթ, նախասահմանում են «անձի արժանապատվություն» սահմանադրական կատեգորիայի բովանդակային ամբողջականությունը, նպաստելով ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետությունում անձի իրական դրության իրացմանը:

10. Արդի իրավաբանական գրականությունում հաճախ անտեսվում է անձի իրավական դրության հիմնատարր հանդիսացող «անձի օրինական շահերի» հասկացության իրական նշանակությունն ու վերջինիս դրսևորման առանձնահատկությունները պետություն-անհատ փոխհարաբերություններում: Ուստի ատենախոսությունում, հայրենական իրավաբանական գրականությունում առաջին անգամ, հետազոտվել և մի շարք եզրահանգումների հիման վրա ներկայացվել է «օրինական շահ» *հեղինակային բնորոշումը*, ինչպես նաև վերջինիս, սուբյեկտիվ իրավունքի և պարտականությունների հետ փոխհարաբերության *նոր հայեցակարգը*, որը դուրս էր մնացել իրավագետների ուշադրությունից: Ավելին, դիտարկելով իրավաբանական պարտականությունների և օրինական շահերի փոխհարաբերության առանձնահատկությունները, ատենախոսը հիմնավորում է, որ անձի իրավաբանական պարտականությունները նպաստում են օրինական շահերի իրականացմանը:

11. Ատենախոսական աշխատանքում հիմնավորվում է այն մոտեցումը, համաձայն որի արդի ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետությունը պարտավորվում է ոչ միայն ճանաչել անձի իրավական դրության տարրերը, այլև երաշխավորել անձի իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի ռեալ իրացումը: Ուստի, պետության հիմնարար գործառութային նպատակները պետք է նաև ընդգրկեն անձի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության և դրանց իրացման հատուկ կառուցակարգեր, որոնք նպաստում են անձի իրավական դրության հաստատմանն ու զարգացմանը:

12. Ատենախոսությունում հիմնավորվում է ընդհանուր, համասոցիալական երաշխիքների (սոցիալական, քաղաքական և հոգևոր) վճռորոշ դերն ու նշանակությունը անձի սուբյեկտիվ իրավունքների, ազատությունների, օրինական շահերի և իրավաբանական պարտականությունների ապահովման և արդյունավետ իրացման գործընթացում: Հեղինակը նաև փաստարկում է, որ անձի իրավական դրության իրացման իրավաբանական երաշխիքները այն իրավական ամբողջական

գործիքակազմն է, որի նպատակն է՝ անմիջականորեն ապահովել իրավունքների, ազատությունների, պարտականությունների և օրինական շահերի իրավաչափ կիրառումը, դրանց իրական պահպանությունն ու պաշտպանությունը, ինչպես նաև ստանալ և օգտվել դրանց հիմքում ընկած բարիքներից:

13. Անձի իրավական դրություն կատեգորիան իրավական կարգավորման տեսանկյունից կրում է երկակի բնույթ՝ մի կողմից բնական իրավական ներգործությունը, մյուս կողմից՝ պոզիտիվ իրավական (գրավոր իրավունքի) խիստ կարգավորվածությունը: Ժողովրդավարական հասարակությունում դրանք փոխլրացնում են միմյանց, իսկ ավտորիտար քաղաքական վարչակարգում կրում են ընդգծված հակադրության (անտագոնիստական) բնույթ: Ավելին, ընդգծելով անձի իրավական դրությունը յուրահատուկ տեղը «իրավական ներգործություն» և «իրավական կարգավորում» հասկացությունների փոխհարաբերության համակարգում, հեղինակը հիմնավորում է, որ իրավական ներգործության առարկան ավելի լայն է իրավական կարգավորման առարկայից, քանի որ ընդգրկում է տնտեսական, քաղաքական, հասարակական այնպիսի հարաբերություններ, որոնք իրավունքով կարգավորված չեն, սակայն իրենց ազդեցությունն են թողնում իրավունքի և իրավահարաբերությունների ձևավորման և զարգացման վրա:

14. Ատենախոսությունում հիմնավորվում է այն մոտեցումը, որ անձի իրավական դրության ներպետական երաշխիքների իրացման գործընթացում ներգրավված են պետական իշխանության բոլոր թևերը՝ օրենսդիր, գործադիր և դատական: Ակնհայտ է, որ պետական իշխանության մարմինները կարող են ինչպես ապահովել, այնպես էլ ոտնահարել, խախտել անձի իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը: Միևնույն ժամանակ, կատարված ուսումնասիրության հիման վրա, հեղինակը հիմնավորում է, որ դատական համակարգի ներքին և արտաքին անկախությունը նպաստում է անձի իրավական դրության իրացման, անձանց խախտված իրավունքների վերականգմանը և երաշխավորված պաշտպանությունը:

15. Անձի իրավունքների իրացման ներպետական միջոցների համակարգում յուրահատուկ տեղ է զբաղեցնում փաստաբանական գործունությունը, քանի որ այն հանդիսանում է իրավապաշտպան գործունեության հիմնական տեսակներից մեկը, որն ուղղված է իրավաբանական օգնություն ստացողի հետապնդած օրինական շահերի իրականացմանը՝ օրենքով չարգելված միջոցներով և եղանակներով: Հիմք ընդունելով անձի իրավական դրության դրսևորման հետ առնչվող տվյալ ոլորտում առկա հիմնախնդիրները, ատենախոսությունում *առաջին անգամ ներկայացվում են* օրենսդրական բարեփոխումների առաջարկներ, որի շրջանակներում Հանրային պաշտպանի գրասենյակը նախ՝ առաջարկվում է դիտարկել ոչ միայն որպես օգնություն տրամադրող, այլ որպես տվյալ գործընթացները կարգավորող կառույց: Հետևաբար, առաջարկվում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի «Փաստաբանությունը և պետությունը» խորագրով 3-րդ հոդվածի 2-րդ մասը վերաձևակերպել հետևյալ կերպ. «Փաստաբանությունը՝ *որպես տվյալ ոլորտը կարգավորող ինքնուրույն ինստիտուտ*, գործում է անկախության, օրինապահության,

ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության սկզբունքների հիման վրա*»(ընդգծումը մերն է՝ Լ.Ղ.):* Ավելին, առաջարկվում է 42-րդ հոդվածի 2-րդ մասը ձևակերպել հետևյալ կերպ. «Հանրային պաշտպանի գրասենյակը փաստաբանների պալատի կազմում գործող կառուցվածքային ստորաբաժանում է, որը *կարգավորում է անվճար իրավաբանական օգնության տրամադրման ոլորտը,* և կազմված է հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարից, երկու տեղակալից, հանրային պաշտպաններից և օժանդակ անձնակազմից *»(ընդգծումը մերն է՝ Լ.Ղ.):* Երկրորդ, առաջարկվում է ապահովվել իրավահավասարության սկզբունքի դրսևորումը սոցիալական երաշխիքների համատեքստում, օրենսդրորեն ամրագրելով հանրային պաշտպան-ների նկատմամբ կիրառվող խրախուսանքի տեսակները և հիմքերը:

16. Անձի իրավական դրության իրացման վերպետական միջոցների շրջանակում ուրույն տեղ են զբաղեցնում միջազգային-իրավական ակտերը, ինչպես նաև ՄԻԵԴ-ի նախադեպային որոշումները, որոնք իրենց անմիջական ազդեցությունն են թողնում ՀՀ-ում իրավունքի զարգացման վրա: Հեղինակը հիմնավորում է, որ մարդու իրավունքների պաշտպանության հիմնախնդիրը ՄԻԵԴ-ում կարող է առաջանալ ոչ միայն Դատարանի կողմից գանգատի ընդունելության, բարեկամական կարգավորման համատեքստում, այլև գանգատի քննության և վճռի կայացման փուլերում, և այդ համատեքստում հեղինակը *ներկայացնում է դրանց լուծմանն ուղղված առաջարկներ: Մասնավորապես, հեղինակն առաջարկում է Նախարարների կոմիտեում ՀՀ ներկայացուցչի միջոցով ՄԻԵԴ ներկայացնել կանոնակարգի 62(1) կանոնի փոփոխության առաջարկ, որի համաձայն կողմերին հնարավորություն կընձեռվի երևան եկած նոր հանգամանքների դեպքում վկայակոչել բարեկամական կարգավորման ընթացքում ներկայացված գրավոր կամ բանավոր հաղորդումները, առաջարկությունները կամ զիջումները, ինչը կարող է նպաստել գործի արդարացի քննությանը: Դրա հետ մեկտեղ, հեղինակն առաջարկում է մշակել և ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչի կողմից Նախարարների կոմիտե ներկայացնել վճռի կատարման վերաբերյալ վերջնական ակտի նմուշ, որով կհաստատվի երկու կողմերի պարտավորությունների կատարումը մինչև նախարարների կոմիտեի կողմից հատուկ բանաձևի ընդունումը:*

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը. **Հետազոտության տեսական նշանակությունը** պայմանավորված է նրանով, որ աշխատությունում ձևակերպված տեսական և գիտագործնական դրույթները հնարավորություն են ընձեռում համապարփակ պատկերացում կազմել արդի ժողովրդավարական պետությունում անձի իրավական դրության, դրա տարրերի դասակարգման, իրացման ներպետական և միջազգային մարմինների կառուցակարգերի, վերջինիս սկզբունքների դրսևորման բովանդակային առանձնահատկությունների, և այլն խնդրահարույց հարցերի գիտական վերլուծություն վերաբերյալ: **Հետազոտության գործնական նշանակությունը** պայմանավորված է նրանով, որ դրանում ձևակերպված դրույթները, ստացված արդյունքները, ինչպես նաև առաջարկությունները կարող են կիրառվել օրինաստեղծ գործունեությունում,

(ներառյալ՝ անձի իրավական դրության բաղադրիչների վերաբերյալ օրենքի նախագծերի մշակման գործընթացում), իրավակիրառ պրակտիկայի կատա-ռելագործման և գիտահետազոտական, գիտամանկավարժական գործունեության իրականացման, այդ թվում՝ ճյուղային իրավաբանական գիտությունների դասավանդման ընթացքում:

Ատենախոսական հետազոտության արդյունքների հավաստիությունը և օբյեկտիվությունը պայմանավորված են մասնագիտական գրականության և նորմատիվ նյութի քննական վերլուծության արդյունքներով, հիմնված իրավագիտության տարաբնույթ ճյուղերում անձի իրավական դրության առանձնահատկությունների ուսումնասիրությամբ:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և դրանց ներդրումը. Հետազոտության թեման հաստավել է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական խորհրդի կողմից, իսկ աշխատանքն իրականացվել է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի Պետահիրավական հետազոտությունների բաժնում, որտեղ անցկացվել են դրա նախնական քննարկումը և երաշխավորումը հրապարակային պաշտպանության: Ատենախոսության առավել կարևոր, հայեցակարգային դրույթները.

1)Արտացոլվել են հեղինակի հրատարակված մենագրություններում, ինչպես ներպետական (ԲՈԿ-ի կողմից հաստատված), այնպես էլ արտասահմանյան հեղինակավոր պարբերականներում հրատարակված 73 գիտական հոդվածներում: Դրանցից են՝ «Անձի իրավական դրություն. Տեսական-իրավական վերլուծություն» (մենագրություն), Եր., Լիմուշ, 2016; «Սիրիահայերի արդի իրավասոցիալական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (համահեղ.՝ Գ.Հ. Սաֆարյան, Ռ.Մ. Պողոսյան), Եր., Լիմուշ, 2016; «Հայ իրավունքի պատմության հիմնահարցեր (Պատմահիրավական վերլուծություն)» (համահեղ.՝ Գ.Հ. Սաֆարյան) Եր., Եվրոպրինտ, 2019, «Սահմանադրահիրավական բարեփոխումների արդի հիմնախնդիրները և խորհրդարանական կառավարման համակարգի զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» (համահեղ.՝ Գ.Հ. Սաֆարյան, Ա.Հ. Խաչատրյան,), Եր., Եվրոպրինտ, 2020; «Հայոց ցեղասպանություն. ճանաչում, դատապարտում, հատուցում» Եր., Եվրոպրինտ, 2021(համահեղ.՝ Գ.Հ. Սաֆարյան):

2)Ներկայացվել են ներպետական և միջազգային գիտաժողովներում, սեմինարներում և «կլոր սեղան-քննարկումներում» գիտական զեկույցների, ելույթների տեսքով (հայերեն, ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով), որոնք հրատարակվել են տարբեր ժամանակաշրջաններում: Դրանցից են՝ «Փիլիսոփայությունն արդի աշխարհում» (UNESCO-ի Փիլիսոփայության միջազգային օրվա կապակցությամբ հրավիրվող ամենամյա գիտաժողով), (2015-2021թթ.), Աստանայի միջազգային սոցիոլոգիական ֆորումը՝ նվիրված Ղազախստանի Հանրապետության առաջին նախագահի օրվան (Աստանա, 2015), «Հայոց նորագույն պետականության քառորդ դարը», հանրապետական գիտաժողով (2016թ.), «Ինովացիոն հնարավորություններ և մարտահրավերներ ժամանակակից

աշխարհում» միջազգային գիտաժողով(2018թ.), «Իրավական գիտական հետազոտություններ. խնդիրներ, օրինաչափություններ, հեռանկարներ». Միջազգային գիտագործնական VII գիտաժողով (Պենզա, 2017), «Եվրոպական գիտական կոնֆերանս», Միջազգային գիտագործնական VI գիտաժողով (Պենզա, 2017),Երիտասարդ մասնագետների և ուսանողների միջազգային գիտաժողովի (2019թ.), Հիմնարար և կիրառական գիտական հետազոտություններ. արդի հարցեր, ձեռքբերումներ և նորարարություններ (Պենզա, 2019թ.), «Ժամանակակից գիտություն. արդիական հարցեր, ձեռքբերումներ և նորարարություն» VII միջազգային գիտագործնական գիտաժողով(Պենզա, 2019թ.), «Հայ հասարակության զարգացման հիմնախնդիրները արդի ժամանակաշրջանում. մարտահրավերներն ու դրանց լուծումները» հանրապետական գիտաժողով (2019թ.), Մխիթար Գոշի ծննդյան 900-ամյակին նվիրված առցանց գիտաժողով (2020թ.),, Եվրասիական ինտեգրացիա. դիրքերի ամրապնդում, կապերի և փոխհարաբերությունների զարգացում» խորագրով միջազգային գիտաժողովը (Մոսկվա-Երևան, 2021թ.), «Հայկական սփյուռքի սոցիալ-տնտեսական ներուժի ուսումնասիրության տեսական-մեթոդաբանական և մեթոդական ռազմավարությունները ԵԱՏՄ ինտեգրացիոն գործընթացների համատեքստում» խորագրով միջազգային մեթոդոլոգիական սեմինար (Մոսկվա-Երևան, 2021թ.):

3) Ներկայացվել են սահմանադրաիրավական բարեփոխումների ընթացքում մի շարք միջազգային և ներպետական կառույցների կողմից համար փաստաթղթերի, օրենքների, ենթաօրենսդրական ակտերի նախագծեր մշակելիս, դրանց վերաբերյալ կարծիքներ և եզրակացություններ ներկայացնելիս, ինչպես նաև աշխատանքային խմբերում անդամակցելիս: Դրանցից են՝ ՀՀ 2015թ.-ի Սահմանադրությունը, Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը (2019), «Գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների» որոշման վերաբերյալ մեթոդաբանություն (2019թ.), «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագիծը (2020թ.), «Տնտեսական մրցակցության պաշպանության մասին» ՀՀ օրենքի նախագիծը (2020թ.), ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարության նախագիծը (2020թ.), ՅՈՒՆԵՍԿՕ-ի Արհեստական բանականության էթիկայի միջազգային չափանիշներ սահմանող գործիքների վերաբերյալ մշակված փաստաթղթի նախագիծը (2020թ.), ՅՈՒՆԵՍԿՕ-ի Բաց գիտությունների ոլորտում միջազգային չափորոշիչների սահմանման հատուկ գործիքի վերաբերյալ մշակված փաստաթղթի նախագիծը (2020թ.), «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ (2021-2022թթ.):

4) Ներկայացվել են մի շարք միջազգային և ներպետական գիտագործնական ծրագրերին, հանձնաժողովներին, խորհրդներին անդամակցելիս: Դրանցից են՝ ՀՀ Սփյուռքի նախարարության հետ համատեղ «Սիրիահայերի արդի իրավա-սոցիալական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով

հետազոտությունը (2016թ.), Հայ-Բելառուսական գիտական հետազոտությունների համատեղ միջազգային ծրագիրը «Արդի ծայրահեղականության սոցիալ-մշակութային գործոնները և ցուցանիշները. Բելառուսի և Հայաստանի համար ռիսկերի բացահայտում» (2017- 2019թթ.), «Գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների» որոշման վերաբերյալ մեթոդաբանության մշակմամբ զբաղվող ՀՀ ԿԳՄՍ գիտության կոմիտեում (ներկայիս Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե) ստեղված աշխատանքային խմբում (2019թ.),«Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի» ֆինանսավորմամբ «Սահմանադրաիրավական բարեփոխումների արդի հիմնախնդիրները և խորհրդարանական կառավարման համակարգի զարգացման հեռանկարները ՀՀ-ում» խորագրով ծրագիր(2019-2020թթ.),ՀՀ Փաստաբանների պալատի խորհուրդ (2021թ.-մինչ օրս):

5) Անձանց փաստաբանական խորհրդատվություն, անվճար իրավաբանական օգնության տրամադրելիս, ինչպես նաև պետական ոլորտի աշխատակիցներին և տարբեր ԲՈՒՀ-րի ուսանողներին վերապատրաստման հատուկ դասընթացների անց-կացման շրջանակներում, այդ թվում՝ «Համեմատական սահմանադրական իրավունք», «Պառլամենտական իրավունք», «Մարդու իրավունքներ» առարկաներից, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի հիմունքները (Սահմանադրության հին և նոր խմբագրության համատեքստում)» հեղինակային հատուկ դասընթացում:

Ատենախոսության կառուցվածքը. Սույն ատենախոսության կառուցվածքը պայմանավորված է հետազոտության նպատակով և խնդիրներով: Ըստ այդմ էլ աշխատանքը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից, որտեղ ներառված են տասնութ ենթագլուխներ, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված են թեմայի արդիականությունը, թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության տեսական, նորմատիվ-իրավական, փորձառական հիմքերը, մեթոդաբանությունը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, ատենախոսական աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների հավաստիություն ու օբյեկտիվությունը, արդյունքների փորձարկումն ու դրանց ներդրումը, ինչպես նաև ատենախոսության կառուցվածքը:

Աշխատանքի առաջին գլուխը՝ ***«Անձի իրավական դրությունը, որպես սահմանադրաիրավական գիտակարգ. մեթոդաբանական խնդիրներ»*** վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջի գլխի առաջին ենթագլխում՝ ***«Անձի իրավական դրության ըմբռնումը սահմանադրական իրավունքի գիտակարգում»*** վերտառությամբ, հեղինակը հանգամանորեն վերլուծել է անձի իրավական դրության տեսանկյունները՝ սահմանադրական իրավունքի հայեցակարգային մոտեցումների առումով:

Եթե իրավունքի տեսության առումով այն դիտարկվում է առավել լայն ասպեկտերով (իրավունակություն, իրավասուբեկտություն, իրավունքներ և ազատություններ, իրավական դրության պատմական զարգացում և այլն), ապա սահմանադրահիրավական կարգավիճակի տեսանկյունից, այն քննարկում է սահմանադրական կատեգորիաները (անձի հիմանական իրավունքներ, ազատություններ և պարտականություններ, քաղաքացիության ինստիտուտ և այլն): Չնայած դրանց տարբերություններին՝ «անձի իրավական կարգավիճակ» և «անձի սահմանադրահիրավական դրություն» կատեգորիաները ունեն շատ ավելի ընդհանուր կողմեր, քան տարբերություններ. օրինակ՝ իրավունքներ, ազատություններ, օրինական շահեր, պարտականություններ, սահմանադրական իրավասուբյեկտություն և այն: Բացի դրանից, ՀՀ Սահմանադրության փիլիսոփայությունն օժտված է «մարդակենտրոն» հայեցակարգային մոտեցմամբ, և առավել կիրառվում է «յուրաքանչյուր ոք» հասկացությունը, այս առումով, կարելի է պնդել, որ «անձի իրավական դրության» «սահմանադրահիրավական դրություն» հասկացություններն, ըստ էության, նույնական են:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ ***«Անձի իրավասուբյեկտության սահմանադրահիրավական բովանդակությունը»*** վերտառությամբ, բացահայտվում են իրավասուբյեկտիվության սահմանադրահիրավական էությունը և բովանդակային առանձնահատկությունները, վերջինիս կապը կամքի ազատության դրսևորման հետ, ինչպես նաև «իրավունակություն, գործունակություն և դելիկտաունակության» եռամիասնության դրսևորման փուլի առանձնահատկությունները: Սահմանադրա-իրավական իրավասուբյեկտությունն, ըստ հեղինակի, իրենից ենթադրում է ոչ միայն իրավունքների և ազատությունների իրականացման իրական հնարա-վորության, այլև դրա շնորհիվ որոշակի նյութական կամ հոգևոր արդյունքների ռեալ ձեռքբերում:

Առաջին գլխի երրորդ ենթագլխում ՝ ***«Քաղաքացիությունը որպես անձի իրավական դրության առանձնահատուկ նախադրյալ»*** վերտառությամբ, հան-գամանորեն վերլուծվում է քաղաքացիության, որպես պետահիրավական ինստի-տուտի էությունը, բովանդակային առանձնահատկությունները և դրա դերն ու նշանակությունը անձի իրավական դրության իրացման համատեքստում: Դիտար-կելով քաղաքացիության սոցիալական և իրավաբանական բովանդակությունը և ուրույն կապը պետության հետ՝ հիմնված քաղաքացիության ինստիտուտի առկայության, անձի իրավունքների, ազատությունների ձեռքբերման և պարտականություններ կրելու առանձնահատկությունների վրա, հեղինակը վերհանում է սահմանադրական իրավունքում քաղաքացիության ինստիտուտի վերաբերյալ տարաբնույթ մոտեցումները, վերջինիս ամրագրման առանձնահատ-կությունները սահմանադրությունում և ընթացիկ օրենսդրությունում: Կատարված ուսումնասիրությունների հիման վրա հեղինակը եզրահանգում է, որ քաղաքա-ցիությունը և քաղաքացու իրավական կարգավիճակի կապն այլ է՝ քաղաքացիութ-յունը գտնվում է իրավական կարգավիճակից դուրս, ընդգրկված չէ վերջինիս

բովանդակությունում, և այն նախադրյալ է հանդիսանում քաղաքացու համար իրավական կարգավիճակի ձեռք բերման, տիրապետման համար:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ ***«Անձի իրավական դրության հայեցակարգային մոտեցումների էվոլյուցիան. քննական և իրավահամեմատական վերլուծություն»*** վերտառությամբ, բաղկացած է չորս ենթագլխից:

Ատենախոսության երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ ***«Անձի իրավական դրություն հայեցակարգի զարգացման սոցիալ-իրավական հիմքերը»*** վերտառությամբ, համակողմանի քննարկվում են անձի իրավական դրության հայեցակարգային մոտեցումների զարգացման սոցիալ-իրավական հիմքերը, դրանց էական առանձնահատկությունները: Ակնհայտ է, որ սահմանադրական բարեփոխումների 2015թ. արդյունքում ընդլայնվել է հիմնական իրավունքների հասցեատերերի շրջանակը, ամրագրելով հանրային իշխանությունների անմիջական պարտականությունը՝ հարգել անձի իրավական կարգավիճակից բխող նրա իրավունքները, ազատությունները և օրինական շահերը:

Երկրորդ գլուխի երկրորդ ենթագլխում՝ ***«Անձի իրավական դրություն» հայեցակարգի առանձնահատկությունները ռուսական սահմանադրական ուսմունքներում»*** վերտառությամբ, հանգամանորեն լուսաբանվում է իրավունքի ռուսական փիլիսոփայության մոտեցումների առանձնահատկությունները անձի իրավական կարգավիճակի վերաբերյալ: Այս առումով կարելի է նշել, որ չնայած 19-րդ դարի իրավունքի ռուսական փիլիսոփայության որոշակի առաջընթացի, այդուհանդերձ կարելի է փաստել, որ ի տարբերության արևմտյան Եվրոպայի հայեցակարգային մոտեցումների, ռուսական իրավաքաղաքական ուսմունքներում նկատվում է առավել լեգիստական կամ պետականամետ դիրքորոշում, համաձայն որի անձի իրավական դրությունը հիմնականում պայմանավորված է պետության իրավական կարգավորումներով, ինչն էլ կանխորոշում է անձի իրավական դրության դրսևորման առանձնահատկությունները հասարակությունում և պետությունում:

Երկրորդ գլուխի երրորդ ենթագլուխում՝ ***«Անձի իրավական դրություն» հայեցակարգի վերաբերյալ մոտեցումների առանձնահատկությունները խորհրդային իրավական դոկտրինում»*** վերտառությամբ, քննական վերլուծության է ենթարկվում խորհրդային շրջանի անձի կարգավիճակի վերաբերյալ իրավագաղափարական մոտեցումը: Խորհրդային դոկտրինի համաձայն, գոյություն չունի անձի ինքնավար իրավական կատեգորիա, որը թույլ կտա անարգելք իրականացնելու անձի իրավասուբյեկտիվությամբ պայմանավորված նրա իրավունքներն ու ազատությունները (հատկապես քաղաքական), ինչը սահմանափակվում է ոչ այնքան իրավական նորմերով, որքան քաղաքական դոգմաներով և վարչահրամայական ռեժիմով:

Երկրորդ գլուխի չորրորդ ենթագլխում՝ ***«Ազգային-իրավական համակարգի ձևավորման և անձի իրավական դրության հիմնախնդիրները»*** վերնագրով, հանգամանորեն լուսաբանվում է նորանկախ պետության իրավական համակարգի ձևավորմանը զուգընթաց՝ անձի իրավական դրության դոկտրինալ և օրենսդրական ամրագրման զարգացման գործընթացը: «Հայաստանի անկախության մասին»

հռչակագիրը 1990թ. և ՀՀ Սահմանադրությունը 1995թ. սկիզբ դրեցին անկախ պետականության պայմաններում անձի իրավական դրության սահմանադրական և օրենսդրական ամրապնդման գործընթացին: Ձևավորվեց նոր ազատական-իրավաբանական գաղափարախոսությունը արդի իրավական դրության վերաբերյալ:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ ***«Անձի իրավական դրության համակարգային ամբողջականության բաղադրիչների դրսևորման առանձնահատկությունները»*** վերտառությամբ, բաղկացած է չորս ենթագլխից:

Ատենախոսության երրորդ գլուխի առաջին ենթագլխում՝ ***«Անձի իրավական դրության էական բաղադրիչներ հանդիսացող իրավունքների և ազատությունների էությունն ու առանձնահատկությունները»*** վերտառությամբ, համակարգված մեթոդաբանությամբ բացահայտվում են անձի սահմանադրական (հիմնական) իրավունքների և ազատությունների էական հատկանիշները և բովանդակությունը, ինչպես նաև դրանց օրգանական կապը անձի իրավական դրության մյուս տարրերի հետ: Հեղինակը անձի իրավական դրության համատեքստում իրավունքների և ազատությունների շարքին է դասում ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային-իրավական ակտերում ամրագրված իրավունքների, ազատությունների համալիրը, միևնույն ժամանակ հիմնավորելով այն գաղափարը, որ սահմանադրաիրավական հարաբերությունների համատեքստում անհրաժեշտ է դիտարկել ինչպես անձի սուբյեկտիվ իրավունքները, այնպես էլ այն բոլոր իրավունքների համալիրը, որոնք ծագում և զարգանում են կոնկրետ իրավահարաբերության տիրույթից դուրս:

Երրորդ գլուխի երկրորդ ենթագլխում՝ ***«Անձի անօտարելի արժանապատվությունը որպես իրավունքների և ազատությունների անքակտելի հիմք»*** վերտառությամբ, հեղինակը դիտարկում է սահմանադրական նորմի կարգավիճակով ամրագրված անօտարելի արժանապատվությունը, որպես անձի իրավունքների և ազատությունների հիմք, այսինքն՝ սկզբնաղբյուր, որից բխում է անձի իրավական կարգավիճակն ամբողջ ծավալով: Հեղինակը վերլուծության ենթարկելով ՄԻԵԴ-ի մի շարք որոշումներ, հիմնավորում է, որ հանդիսանալով իր էությամբ կյանքից և մահից անդին, անձի արժանապատվությունը, որպես իրավաբանական կատեգորիա, բացահայտվում է անձնական իրավունքներ և ազատություններ համակարգով, որոնք երաշխավորված են տվյալ պետությունում յուրաքանչյուր մարդու համար: Այնուամենայնիվ, մարդու արժանապատվության լիարժեք իրացման և պաշտպանության համար ամենակարևոր նախադրյալը՝ անձի հնարավորությունների, օրինական շահերի, իրավունքների և ազատությունների անարգելք իրագործումն է:

Երրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ ***«Անձի օրինական շահերի հասկացության հիմնախնդիրը սահմանադրական իրավունքի գիտության մեջ»*** վերտառությամբ, հեղինակը բացահայտում է «օրինական շահերի» սահմանադրաիրավական բովանդակությունը՝ արդի գլոբալ իրավական զարգացումների համակարգում: Հեղինակը հիմնավորում է, որ օրինական շահերը, օժտված լինելով դրսևորման տարաբնույթ եղանակներով, ընկած են իրավունքի գործողության

ոլորտում, լրացնելով անձի իրավունքների, ազատությունների և պարտականությունների համակարգը՝ դուրս են գալիս այդ շրջանակից, իսկ դրանց իրացումը խարսխվում, երաշխավորվում և պահպանվում է սահմանադրական նորմով: Հեղինակը հիմնավորում է, որ անթույլատրելի է օրինական շահերի՝ որպես անձի իրավական կարգավիճակի կառուցվածքային տարրի անտեսումը սահմանադրական իրավունքի, որպես անընդհատ զարգացող գիտության մեջ: Ավելին, օրինական շահերն օժտված են իրավակարգավորիչ բնույթով, քանի որ սուբյեկտի վարքագիծը կարգավորվում է ոչ միայն իրավունքի նորմերում ամրագրված վարքագծի կանոններով, այլև այն վերապահումներով, որոնք բխում են այդ նորմերի ոգուց:

Երրորդ գլուխի չորրորդ ենթագլխում՝ ***«Անձի իրավաբանական պարտականությունները որպես սահմանադրաիրավական դրության անքակտելի բաղադրիչ»*** վերտառությամբ, հեղինակը փաստարկում է, որ իրավաբանական պարտականությունները ի սկզբանե կազմում են անձի իրավական դրության անքակտելի բաղադրիչը: Հեղինակը հիմնավորում է, որ հնարավոր չէ պատկերացնել անձի իրավունքները՝ պարտականություններից զատ, քանի որ դրանք փոխլրացնում և փոխպայմանավորում են միմյանց: Ենթագլխի շրջանակներում ներկայացվում են անձի հիմնական, սահմանադրական պարտականությունների տեսակներն ու դրանց յուրահատկությունները:

Ատենախոսության չորրորդ գլուխը՝ ***«Անձի իրավական դրության դրսևորումները, սկզբունքները և առանձնահատկությունները իրավակարգավորումների ոլորտում»*** վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլխից:

Չորրորդ գլխի առաջին ենթագլխում՝ ***«Անձի իրավական դրության սկզբունքների բովանդակությունը և սոցիալ-իրավական նշանակությունը»*** վերտառությամբ, բացահայտվում են անձի իրավական դրության հետ կապված յուրաքանչյուր սկզբունքի էությունն ու բովանդակությունը, սոցիալ-իրավական նշանակությունը՝ անձի իրավական դրությունը որոշելիս: Ավելին, հեղինակը անձի իրավական դրության սկզբունքները դիտարկում է որպես մեկ ամբողջական և միասնական համակարգ, որը կանխորոշում է անձի ոչ միայն իրավական, այլև փաստացի դրությունը տվյալ հասարակությունում: Առանձնացնելով անձի իրավունքների, ազատությունների և պարտականությունների հավասարության (իրավահավասարության) սկզբունքը, որպես անձի իրավական դրության առանցքային սկզբունք և դրա փոխկապակցվածությունը անձանց իրավունքների, ազատությունների և պարտականությունների համընդհանրության սկզբունքի հետ, հեղինակը ընդգծում է այդ սկզբունքի բովանդակությունը, որն արտահայտվում է մարդու և քաղաքացու իրավական դրության իրավահավասարության, այդ թվում՝ անձի հիմնական իրավունքների, ազատությունների, օրինական շահերի, պարտականությունների իրավահավասարության՝ անկախ նրանց փաստացի տարբերություններից, օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարության մեջ:

Չորրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ ***«Անձի իրավական դրության հիմնական դրսևորումները. տեսական և օրենսդրական ասպեկտները»***

վերտառությամբ, հեղինակը համակողմանի և խորքային վերլուծության է ենթարկում անձի իրավական դրության դրսևորումների համալիր հիմնախնդիրները տեսական և օրենսդրական մակարդակներում և դրանց արդյունքների հիման վրա ձևակերպում է օրենսդրական բնույթի առաջարկություններ, որոնք կարող են նպաստել գործող օրենքների և այլ իրավական ակտերի կատարելագործմանը: Հեղինակը ներկայացնելով իրավական դրության տարաբնույթ տեսակները և դրանց դասակարգման վերաբերյալ սահմանադրական իրավունքում առկա արդի մոտեցումները, ներկայացնում է իրավասուբյեկտության վրա հիմնված ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավական կարգավիճակի առանձնահատկությունները: Ավելին, վերլուծության են ենթարկվում օտարերկրացիների, երկքաղաքացիների, ապատրիդների, փախստականների, արտակարգ իրավիճակներում աշխատող անձանց իրավական վիճակի դրսևորման յուրահատկությունները:

Ատենախոսության չորրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ ***«Անձի իրավական դրության հիմնախնդիրները իրավակարգավորումների ոլորտում»*** վերնագրով, քննական վերլուծության են ենթարկվում իրավական դրության հիմնահարցերը բազմազան և բազմատեսակ իրավակարգավորումների ոլորտում:Ներկայացվում է «իրավական կարգավորում» և «իրավական ներգործություն» հասկացությունների բնութագրիչ հատկանիշները, նրանց միջև ուրույն կապը, որն արտահայտվում է նրանով, որ անձի հնարավոր վարքագծի տարբերակների սահմանումը հանգեցնում է իրավահարաբերության շրջանակից դուրս գտնվող անձի գործողությունների խթանմանը: Այստեղից հետևում է, որ որոշակի վարքագծի խթանումը հանդիսանում է կառավարման տեսակներից մեկը, որն օժտված է ավելի միջնորդավորված բնույթով, քան ուղղակի հրահանգները: Ավելին, ենթագլխում հիմնավորվում է, որ իրավական ներգործությունը ձևավորվում է դեռևս իրավաստեղծ գործունեության փուլում:

Ատենախոսության հինգերորդ գլուխը՝ ***«Անձի իրավական դրության սոցիալ-իրավական երաշխիքների համակարգը և դրա կատարելագործման հիմնախնդիրները արդի սահմանադրահիրավական զարգացումների տեսանկյունից»*** վերտառությամբ բաղկացած է չորս ենթագլխից:

Ատենախոսության հինգերորդ գլուխի առաջին ենթագլխում՝ ***«Անձի իրավական դրության ընդհանուր սոցիալական երաշխիքների էությունը և նշանակությունը»*** վերտառությամբ, հեղինակը բազմակողմանի վերլուծության է ենթարկում սոցիալական երաշխիքների տեսակներն ու դասակարգման առանձնահատկությունները: Ըստ այդմ՝ առաջարկվում է ընդհանուր սոցիալական երաշխիքներում (պայմաններում) առանձնացնել տնտեսական, քաղաքական, հոգևոր-գաղափարախոսական երաշխիքները, որոնք հանդիսանում են ընդհանուր հիմք և անհրաժեշտ պայման ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետության կայուն զարգացման և անձի իրավական դրության արդյունավետ իրացման համար: Ընդ որում, հեղինակը փաստում է, որ վերոնշյալ պետության զարգացման համար գերկարևոր է ոչ միայն տվյալ երաշխիքների ամրագրումը

Սահմանադրությունում, ընթացիկ օրենսդրությունում, այլև պետության կողմից տվյալ երաշխիքների իրացմանն ուղղված հատուկ գործուն կառուցակարգերի ներդրումը:

Հինգերորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ ***«Անձի իրավական դրության իրացման իրավաբանական երաշխիքների բնութագրիչ հատկանիշները» վերտառությամբ,*** հեղինակը վերհանում է, որ անձի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի լիարժեք իրացման համար անհրաժեշտ են իրավաբանական հատուկ երաշխիքներ, այսինքն՝ միասնական իրավական ձև ունեցող միջոցներ, որոնց նպատակն է՝ անմիջականորեն ապահովել իրավունքների, ազատությունների, պարտականությունների և օրինական շահերի իրավաչափ կիրառումը, դրանց իրական պահպանությունն ու պաշտպանությունը: Կատարված ուսումնասիրությունների հիման վրա առաջարկվում է առանձնացնել անձի իրավունքների, ազատությունների և պարտականությունների իրացման հետևյալ իրավաբանական երաշխիքները. 1) օրենսդրորեն ամրագրված անձի իրավունքների, ազատությունների և պարտականությունների սահմանների հստակեցումը, 2) այն իրավաբանական փաստերի սահմանումը, որոնց հետ կապված է իրավունքների, ազատությունների և օրինական շահերի և պարտականությունների իրացումը, 3) անձի իրավունքների, ազատությունների, օրինական շահերի և պարտականությունների իրացման դատավարական-ընթացակարգային եղանակը, 4) արտոնություններն ու խրախուսման միջոցները, որոնք խթանում են անձի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի արդյունավետ իրականացումը:

Հինգերորդ գլխի երրորդ ենթագլխում՝ ***«Անձի իրավական դրության ներպետական երաշխիքների համակարգի առանձնահատկությունները»*** վերտառությամբ, բացահայտվում են անձի իրավական դրության հետ շաղկապված ներպետական համակարգի երաշխիքների բովանդակային առանձնահատկությունները և դրանց նշանակությունը: Մասնավորապես, դիտարկվում է անձի իրավական դրության տարրի իրացման և երաշխավորման գործընթացում ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ Կառավարության, Մարդու իրավունքների պաշտպանի, դատական համակարգի, փաստաբանության ինստիտուտի կարևորագույն դերը: Հեղինակը մատնանշում է, որ դատական պաշտպանությունը հանդիսանում է անձի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի երաշխավորման և պահպանման ներպետական կառուցակարգերի առավել տարածված և գործուն միջոց, իսկ վերջինիս հիմնարար գործառույթը՝ արդարադատության իրականացումը, խարսխված է մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պահպանության ու պաշտպանության, խախտված իրավունքների վերականգման, ինչպես նաև պետական շահերի պաշտպանության վրա: Հայտնի է, որ միջազգային իրավական ակտերը, ՀՀ Սահմանադրությունն ու ընթացիկ օրենսդրությունը սահմանում են մարդու իրավունքների դատական պաշտպանության սկզբունքները, որոնք համահունչ են պետության կողմից անձի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի երաշխավորման, պահպանման և պաշտպանման պետության պարտականությանը: Ավելին, անձի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի երաշխավորման և պահպանության համար կարևորագույն

նշանակություն ունեն անկախ, անաչառ ու անկողմնակալ դատարանների առկայությունը: Դատական իշխանության, դատարանի անդամների արտաքին և ներքին անկախության երաշխիքների ամրապնդումն անմիջականորեն կապված է պետության կողմից մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների ապահովման ու պաշտպանության երաշխիքների իրականացման հետ: Ակնհայտ է, որ առանց վերոնշյալ անկախության երաշխիքների, պետությունը չի կարող պատշաճ եղանակով ապահովել անձի իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունն ու դրանց իրացման կառուցակարգերի գործողությունը: Դիտարկելով իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի երաշխավորվածությանը, որպես անձի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային իրավական գործուն միջոց, կարևորվում է վերջինիս ՀՀ Սահմանադրությունում ամրագրման փաստը, ներկայացվում են իրավաբանական օգնություն տեսակները, Հանրային պաշտպանի ինստիտուտի գործունեության առանձնահատկությունները, ինչպես նաև մի շարք առաջարկներ ուղղված ոլորտի բարելավմանն ու օրենսդրության կատարելագործմանը: Դիտարկելով անմեղության կանխավարկածն որպես պետության կողմից անձի իրավունքների և ազատությունների ապահովման երաշխիք, ատենախոսությունում հիմնավորվում է այն փաստը, որ անմեղության կանխավարկածի պահանջով անձի մեղավորությունը հանցանք կատարելու մեջ պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ: Վերջինս ենթադրում է կոնկրետ գործով ապացուցման շրջանակների այնպիսի որոշումը, որպեսզի հավաքված ապացույցները որակական կողմից ապահովեն ապացուցման առարկայի յուրաքանչյուր տարրի պարզումը, իսկ քանակական կողմից՝ այդ հանգամանքների բացահայտման արժանահավատությունը և դատավարական որոշումների հիմնավորվածությունն ու պատճառաբանվածությունը: Ավելին, չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղությանը:

Հինգերորդ գլխի չորրորդ ենթագլխում՝ ***«Անձի իրավական դրության ապահովումը վերպետական կառույցների համակարգում»*** վերտառությամբ, հեղինակը քննական վերլուծության է ենթարկում մարդու իրավունքների պաշտպանությանն ու պահպանության ապահովումն իրականացնող հանրաճանաչ միջազգային (համընդհանուր) և տարածաշրջանային կառուցակարգերն ու կառույցների, այդ թվում՝ ՄԻԵԴ-ի գործունեության սկզբունքները:Հեղինակն արձանագրում է, որ ՄԻԵԿ-ի թիվ 15 Արձանագրության ընդունումն էական փոփոխության է ենթարկել ՄԻԵԴ-ի գործունեությունը, նպաստելով վերջինիս արդյունավետության բարձրացմանը, որի շրջանակներում կարելի է առանձնացնել Եվրոպական կոնվենցիայի նախաբանում լրացված սուբսիդիարության և պետության հայեցողության իրավունքի սկզբունքները վկայակոչող դրույթները: Կատարված ուսումնասիրությունների հիման վրա հեղինակը փաստում է, որ մարդու իրավունքների պաշտպանության տարաբնույթ հիմնախնդիրները ծագում և զարգանում նաև Դատարանի ներսում, սկսած գանգատի ընդունելության,

բարեկամական կարգավորումների փուլով և վերջացրած վճռի կայացման փուլով: Ավելին, հեղինակը ներկայացնում է գործուն առաջարկներ վերոնշյալ փուլերում անձի իրավունքների և ազատությունների իրացման, խախտված իրավունքների վերականգման նպատակով:

Ընդհանրացնելով հետազոտության արդյունքները հեղինակը ձևակերպել է հետևյալ եզրահանգումները.

1. Անձի իրավական դրությունը կանխորոշում է անձի իրավական և փաստացի հնարավորությունը (կարողությունը) իրականացնելու իր իրավունքները, ազատությունները, օրինական շահերն ու պարտականությունները ժողովրդավարական իրավական պետությունում, ինչպես նաև որոշում է անձի ընդհանուր, սահմանադրական և հատուկ կարգավիճակի ծավալն ու բովանդակությունը:

2. Անձի իրավական դրությունը իրավաքաղաքական կարևոր կատեգորիա է, որի բնույթից ու բովանդակությունից է կախված տվյալ պետության «մարդասիրական դեմքը», քաղաքական ռեժիմի էությունն ու բովանդակությունը, իշխանությունների բաժանման սկզբունքի իրական իրականացումը, իրավունքի և ազատությունների համակարգը, դրանց պաշտպանվածության իրական վիճակը, և այլն: Այն նաև հանդիսանում է տվյալ հասարակության քաղաքակրթական մակարդակի, իրավական մշակույթի և իրավագիտակցության զարգացվածության աստիճանը բնութագրող որոշակի չափանիշ:

3. Արդի իրավունքի գլոբալացման պայմաններում անձի իրավական դրությունը գտնվում է միջազգային և ազգային ազդեցությունների կիզակետում, իր վրա կրելով թե՛ դրական, և թե՛ բացասական ներգործությունները: Հետևաբար, հեղինակը առաջարկում է անձի իրավական դրություն հստակ ամրագրում օրենսդրական մակարդակով, որպեսզի ապահովվի նրա կայունությունը, հուսալիությունը և արդյունավետ գործառնությունը:

4. Անձի իրավական դրության, որպես համալիր կատեգորիայի, կայունությունն ու արդյունավետությունը պայմանավորված է նրանում ներառված իրավական տարրերի՝ իրավունքների, ազատությունների, օրինական շահերի և պարտականությունների, իրավասուբյեկտիվության (ընդհանուր, սահմանադրական և հատուկ), ինչպես նաև քաղաքացիության բովանդակությունից, քանի որ դրանք փոխկապված տարրեր են և ամբողջության մեջ կազմում են միասնական, համակարգված օղակների անքակտելի իրավական երևույթ, որն անվանվում է անձի իրավական դրություն:

5. Իրավասուբյեկտությունը և իրավական կարգավիճակը, որպես հարակից հասկացություններ, բովանդակային առումով տարբերվում են իրենց առանձնահատկություններով: Իրավասուբյեկտությունը ներառում է անձի իրավունակության, գործունակության և դելիկտաունակության տարրերը, որոնց միջոցով իրավահարաբերություններում հանդես է գալիս իրավունքի սուբյեկտի (իրավական անձի) վիճակով: Իրավասուբյեկտությունը հարաշարժ և ճկուն կատեգորիա է, իսկ իրավական դրությունը (կարգավիճակը) հարաբերական կայուն

ու հաստատուն կատեգորիա է, չնայած որ բովանդակային առումով ներառում է նաև իրավասուբյեկտությունը:

6. Անձի իրավական դրությունը (կարգավիճակը) որոշվում է ինչպես ներպետական օրենսդրությամբ, իրավական սկզբունքներով և իրավական ավանդույթներով, այնպես էլ միջազգային իրավական նորմերով ու սկզբունքներով, որոնց միացել, վավերացրել կամ հաստատել է Հայաստանի Հանրապետությունը: Դեռ ավելին, իրավական պետությունում անձի իրավական դրության կարգավորումը չի սահմանափակում վերոնշված պոզիտիվ իրավական նորմերով, այն որոշվում է նաև բնական իրավունքով, միջազգային ու ազգային իրավակիրառ պրակտիկայով: Անձի իրավական դրությունը (կարգավիճակը) որոշվում է նաև վերպետական մակարդակով, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներով և վճիռներով:

7. Անձի իրավական դրությանը որոշիչ դերակատարում ունի ոչ միայն իրավաստեղծ, իրավակիրառ և իրավապահպան գործունեության զարգացման խնդրում, այլև գլոբալ առումով՝ ներքաղաքական, տարածաշրջանային և միջազգային զարգացումների, այդ թվում՝ իրավական, սոցիալ-տնտեսական համագործակցության, և գլոբալ համավարակների դեմ պայքարի հարցում: Պատկերավոր արտահայտված՝ «անձի իրավական դրությունը» գեներացնում է հասարակական հարաբերությունների ողջ համակարգի զարգացումը՝ թե՛ երկրի ներսում, և թե՛ նրա սահմաններից դուրս:

8. Մարդու իրավունքների և ազատությունների ապահովման և պաշտպանության պարտականությունը դրված է պետության ուսերին: ՀՀ Սահմանադրության 3–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: ՀՀ Սահմանադրության հիշյալ դրույթը հանրային իշխանություններին ներկայացնում է երկու հստակ պահանջ (պարտականություն)՝ հարգել, մասնավորապես, ձեռնպահ մնալ որևէ անհարկի միջամտությունից, և պաշտպանել, այսինքն՝ որոշակի գործողությունների ամբողջության միջոցով երաշխավորել, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները չխախտվեն կամ խախտվելու դեպքում՝ վերականգնվեն:

9. Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության գործընթացում ծանրակշիռ իրավասություններով են օժտված ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ կառավարությունը, Մարդու իրավունքների պաշտպանը: Վերոնշյալ մարմիններն իրենց լիազորությունների շրջանակում ջանում են ստեղծել համապատասխան կառուցակարգեր, որոնց միջոցով հնարավոր կլինի լիարժեքորեն իրականացնել անձի իրավունքների և ազատությունների պահպանությունն ու պաշտպանությունը: Օրինակ՝ ապահովել Սահմանադրությամբ նախատեսված իրավունքների ու ազատությունների երաշխավորված և համալիր իրացումը՝ որպես իրավունքի գերակայության, իրավական պետության կայացման ու զարգացման անհրաժեշտ նախապայման: Մասնավորապես, իրավակարգավորման ձևերի ու

միջոցների ընտրությունը, դրանցով անձանց իրավունքների գործադրման առավել արդյունավետ երաշխիքներ ստեղծելու օրինաչափ նպատակ հետապնդելը չեն կարող իրացվել ի հաշիվ սահմանադրաիրավական որևէ նորմի ու սկզբունքի անտեսման:

10. Անձի իրավունքների և ազատությունների ապահովման և պաշտպանության երաշխավորման գործընթացում կարևորվում է պետության կողմից դատական իշխանության՝ որպես արդարադատություն իրականացնող մարմնի, արտաքին և ներքին անկախության ապահովումը: Կարծում ենք, որ անհրաժեշտ է մշակել հստակ կառուցակարգեր, որոնք կապահովեն դատական իշխանության լիարժեք և իրական անկախությունն ինչպես բոլոր անձանցից, այնպես էլ պետությունում ի հայտ եկող սոցիալ-տնտեսական, քաղաքական խրթին իրադրություններից և դրանց հետ կապված տարաբնույթ հասարակական հարաբերություններից:

11. Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի երաշխիքը հանդիսանում է ոչ միայն անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության ներպետական, այլև միջազգային իրավական միջոց: Ինչ վերաբերում է պետության կողմից երաշխավորված անվճար իրավաբանական օգնությանը, ապա ՀՀ օրենքը «Փաստաբանության մասին» սահմանում է այն ստանալու դեպքերն ու կարգը, ինչպես նաև անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակը: Կարծում ենք, որ Հանրային պաշտպանի ինստիտուտից զատ, ՀՀ Փաստաբանների պալատի կողմից տրամադրվող անվճար իրավաբանական խորհրդատվությունը աջակցում է սոցիալական վատ վիճակում գտվող անձանց լուծել իրենց առջև ծառացած խնդիրները: Ավելին, հաշվի առնելով Հանրային պաշտպանի գրասենյակի ծանրաբեռնվածությունը, որպես սոցիալական երաշխիքի իրականացում, առաջարկում ենք միջնորդել ՀՀ կառավարությանը որոշ չափով սուբսիդացնելու գրասենյակի ծախսերը:

12. «Անձի իրավական դրություն» հասկացությունը լինելով ազգային իրավունքի համակարգի կենտրոնական առանցքը, նաև կատարում է համակարգաստեղծ գործառույթ, քանզի իրավական դրությունը կանոնակարգվում է ոչ միայն սահմանադրական, այլև վարչական, քաղաքացիական, աշխատանքային և իրավունքի այլ ճյուղերի նորմերով: Այս առումով, կարելի է փաստել, որ «անձի իրավական դրությունը» համալիր իրավաբանական կատեգորիա է:

Դոկտորական ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

ա) Մենագրություններ.

1. **Սաֆարյան Գ.Հ., Ղազանչյան Լ.** Հայոց ցեղասպանություն. Ճանաչում, դատապարտում, հատուցում,Երևան, «Եվրոպրինտ» հրատ., 2021, 136 էջ:

2. **Ղազանչյան Լ.Ա. Սաֆարյան Գ.Հ., Խաչատրյան Ա.Հ.** Սահմանադրաիրավական բարեփոխումների արդի հիմնախնդիրները և խորհրդարանական կառավարման

համակարգի զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում, Եր., «Եվրոպրինտ» հրատ., 2020, 160 էջ:
3. **Սաֆարյան Գ.Հ., Ղազանչյան Լ.Ա.** Հայ իրավունքի պատմության հիմնահարցեր (պատմահիրավական վերլուծություն), Եր., «Եվրոպրինտ» հրատ., 2019, 108 էջ:
4. **Սաֆարյան Գ.Հ., Պողոսյան Ռ.Մ., Ղազանչյան Լ.Ա.** Սիրիահայերի արդի իրավասոցիալական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., Լիմուշ, 2016,136 էջ:
5. **Ղազանչյան Լ.Ա.**Անձի իրավական դրություն. Տեսական-իրավական վերլուծություն, Եր., «Լիմուշ» հրատ., 2016, 294 էջ:

բ) Գիտական հոդվածներ.

1. **Казанчян Л.** Сущность и особенности юридических обязанностей личности// «Кантех» Научные труды. Ереван.2015. №1(63).С. 222-233.
2. **Казанчян Л.** Правовое положение жещин в демократическом, правовом государстве: теоретико-правовое и социологическое исследование// Сборник материалов Астанинского социологического форума, посвященного Дню Пермого Президента Республики Казахстан.Астана.2015.С. 285-292.
3. **Ղազանչյան Լ.** Անձի իրավական դրության առանձնահատկությունները հայոց նորագույն պետականության քառորդ դարում// «Հայոց նորագույն պետականության քառորդ դարը», գիտաժողովի զեկույցների դրույթներ, 15 հուլիսի 2016թ. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, էջ 111-116:
4. **Ղազանչյան Լ.** Մարդու իրավունքները փոփոխված ՀՀ սահմանադրության լույսի ներքո// Փիլիսոփայությունը արդի աշխարհում, UNESCO-ի Փիլիսոփայության միջազգային օրվա կապակցությամբ գիտաժողովի նյութեր, Երևան, 2016, գիրք IV, էջ 242-251:
5. **Казанчян Л.** Современные трактовки и классификация понятия и элементов законных интересов личности//«Качар» Сборник научных трудов НАН РА. Международный научно-образователный центр. 2016.С. 112-119.
6. **Казанчян Л.** Особенности основных видов правового статуса личности// Кантех. Научные труды. Ереван.№2(67), 2016.С. 136-146.
7. **Ղազանչյան Լ.** Անձի իրավական դրության ընդհանուր սոցիալական երաշխիքների էությունը//Կանթեղ. Գիտական հոդվածներ,№ 3(72),2017, էջ 181-190:
8. **Казанчян Л.** Принцип равенства перед законом и судом в контексте правового положения личности// Правовые научные исследования: Проблемы, законо-мерности, перспективы. Сборник статей VII Международной научно-практической конференции.Пенза. МЦНС «Наука и Просвещение», 2017. С. 189-193.
9. **Казанчян Л.** Проблемы правового положения личности в истории права советского периода// European Scientific Conference. Сборник статей VI Международной научно-практической конференции. Пенза. МЦНС «Наука и Просвещение», 2017.С. 99-104.
10. **Казанчян Л.** Свобода-как элемент правового положения личности// Юридический факт. Научный юридический журнал. Вып. 15. Кемерово. 2017.С.36-40.

11. **Ղազանչյան Լ.** Անձի իրավական դրության իրացման իրավաբանական երաշխիքների առանձնահատկությունները// Օրինականություն, 101 (3), Երևան, 2017, էջ 44-50:
12. **Казанчян Л.** Общая характеристика и юридические особенности проявления экстремизма// Философия в современном мире. Мат. конф. приурочен. к Международному дню философии ЮНЕСКО.Ер., 2017,Книга V.С. 230-233.
13. **Ղազանչյան Լ.** Անձի իրավական դրության հասկացությունը և իրավաբանական կառուցվածքը// Արդարադատություն, դեկտեմբեր, №6(41), Եր., 2017, էջ 42-48:
14. **Ղազանչյան Լ.** Արժանապատվությունը որպես անձի իրավունքների և ազատությունների հիմք// Օրինականություն, №102, Եր., 2017, էջ 53-57, 91:
15. **Ղազանչյան Լ.** «Անձի իրավական դրություն» հայեցակարգի առանձնահատկությունները ռուսական իրավական տեսությունում// Կանթեղ. Գիտական հոդվածներ,№4(73), Եր., 2017, էջ 197-206:
16. **Ղազանչյան Լ.** «Անձ» հասկացությունը անձի իրավական դրության համատեքստում// Կանթեղ. Գիտական հոդվածներ, №4(73), Եր., 2017, էջ 206-211:
17. **Ղազանչյան Լ.** Անձնագիր վերցնելը որպես անձի իրավական դրության սահմանափակում//«Քննիչ» ՀՀ քննչական կոմիտեի գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես,№ 7/2017, Երևան, 2017, էջ 72-78:
18. **Казанчян Л.**Статус иностранцев, беженцев и апатридов в контексте правового положения линочности и законодательства Республики Армения// Юридический факт. Научный юридический журнал. Выпуск 23. Кемерово. 2018.С. 97-99.
19. **Ղազանչյան Լ.** Օտարերկրացիների, փախստականների և ապատրիդների կարգավիճակն անձի իրավական դրության համատեքստում// Կանթեղ. Գիտական հոդվածներ, 2018, № 1, էջ 187-193:
20. **Казанчян Л.** Понятие «личность» в контексте правового положения личности// Евразийский юридический журнал, №1 (116), М., 2018. С. 100-103.
21. **Ղազանչյան Լ.** Անձի իրավական դրության առանձնահատկությունները սահմանադրական բարեփոխումների համատեքստում// «Ինովացիոն հնարավորություններ և մարտահրավերներ ժամանակակից աշխարհում» Միջազգային գիտաժողովի նյութեր, ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգայի կենտրոն, Եր. , Նաիրի հրատ, 2018, էջ 277-284:
22. **Ղազանչյան Լ.** Անձի իրավական դրության որոշ տարրերի շուրջ//Երիտասարդ մասնագետների և ուսանողների միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, "ՎՄՎ-ՊՐԻՆՏ" հրատ, Երևան, 2019, էջ 152-157:
23. **Казанчян Л.** Разграничение понятий «радикализм» и «экстремизм» //Фундаментальные и прикладные научные исследования: актуальные вопросы, достижения и инновации. Пенза, МЦНС «Наука и Просвещение», 2019. С.176-178.
24. **Казанчян Л.** Юридические свойства экстремизма// «Юридический факт». Научный юридический журнал. №54, Кемерово, 2019. С. 54-59.
25. **Казанчян Л.** Некоторые юридические аспекты радикализма// Современная наука: актуальные вопросы, достижения и инновации: сборник статей VII

Международной научно-практической конференции. 05.06.2019. В 4 ч. Ч. 3. Пенза, МЦНС «Наука и Просвещение», 2019. С. 213-215.
26. **Казанчян Л.А.,** Особенности правового положения личности в истории права постсоветского периода//Социология и право. №1 (43).СПб. 2019. С.65-70.
27. **Казанчян Л.А., Шукурян А.В.** О некоторых аспектах справедливости// «Юридический факт». Научный юридический журнал.№58, Кемерово,2019.С.25-28.
28. **Казанчян Л.А., Костанян Г.С.** Особенности презумпции невиновности в контексте постановлений европейского суда по правам человека// «Юридический факт». Научный юридический журнал, Кемерово, Выпуск №70. 2019.С. 56-59.
29. **Казанчян Л.А., Костанян Г.С.**Особенности права на получение защиты и юридической помощи в контексте постановлений европейского суда по правам человека// «Юридический факт». Научный юридический журнал, Кемерово, Выпуск №80. 2019.С. 3-8.
30. **Казанчян Л.А., Костанян Г.С.** О некоторых особеннаостях пределов усмотрения государства// Проблемы развития армянского общества в современную эпоху: вызовы и пути их решения (Сб. научных статей), Ер., Мива-Пресс, 2019. С. 207-221.
31. **Казанчян Л.А.,** Законодательная и исполнительная власть как гарант защиты правового положения личности// Евразийский юридический журнал, М., №5 (144), 2020. С.93-95.
32. **Казанчян Л.А.,** Некоторые аспекты правового положения личности в контексте конституционных реформ в Республике Армения//Евразийский юридический журнал. М., №5 (144), 2020.С.125-128.
33. **Казанчян Л.А.,** Некоторые аспекты правотворческой деятельности// Сб.ст. IV Международной научно-практической конфер. “Наука, образование, инновации: актуальные вопросы и современные аспекты”, Пенза: МЦНС «Наука и Просвещение», 2020.С.132-134.
34. **Казанчян Л.А.,** Некоторые особенности функционирования современного парламента// Научный журнал “Юридический факт”,Кемерово,№ 97,2020. С.35-38.
35. **Казанчян Л.А., Костанян Г.С.** Некоторые особенности структуры современного парламента//Научный журнал“Юридический факт”, Кемерово,№ 103, 2020. С.14-18.
36. **Казанчян Л.А.,** Процедуры рассмотрения и принятия законопроектов выделенных в национальном собрании Республики Армения// Научный журнал “Юридический факт”, Кемерово, №110, 2020.С.15-17.
37. **Казанчян Л.А., Костанян Г.С.** Особенности правового статуса депутата национального собрания Республики Армения// The Scientific Heritage. Budapest, №49, 2020. P.6. С. 51-54.
38. **Казанчян Л.А., Костанян Г.С.** Общая характеристика законодательного процесса в Республике Армения// The Scientific Heritage, Budapest, №50 (2020). P.4. С.46-50.

39. **Казанчян Л.А., Костанян Г.С.** Сравнительный анализ различных форм современного принципа разделения властей// Научный журнал “Юридический факт”, Кемерово, вып. № 116, 2020.С.27-31.
40. **Kazanchian L.** Features of fundamental rights in the context of the philosophy of law//“Wisdom”, Yerevan, № 1(14), 2020. P.159-165 (Scopus, Web of Science).
41. **Kazanchian L.** Features of human dignity in the context of the modern philosophy of law//“Wisdom”, Yerevan, № 2(15), 2020.P. 147-152 (Scopus, Web of Science).
42. **Казанчян Л.А., Костанян Г.С.** О некоторых особенностях гражданского общества// Научный журнал “Юридический факт”, Кемерово, №129, 2021.С.27-31.
43. **Казанчян Л.А., Костанян Г.С.** Особенности законодательной инициативы депутата парламента Республики Армения// Sciences of Europe.Praha, Vol 3, № 66 (2021).P.40-43
44. **Казанчян Л.А., Костанян Г.С.** Некоторые аспекты полномочий правительства Республики Армения//The Scientific Heritage. Budapest,Vol 4, № 65 (65), 2021.С. 6-9.
45. **Казанчян Л.А.,** Особенности правового положение судьи в контексте гарантий независимости судебной власти// The Scientific Heritage. Budapest, Hungary. Vol 4, № 67 (67), 2021.С.29-33.
46. **Казанчян Л.А.,** Особенности прав иностранных граждан в контексте миграции и законодательства Республики Армения// The Scientific Heritage. Budapest. Vol 4, № 69 (69).С.21-24.
47. **Казанчян Л.А., Костанян Г.С.** Сущность и особенности понятия “гражданское общество// Sciences of Europe. Praha. Vol 3, No 70(2021).С.3-6.
48. **Kazanchian L., Kostanyan G.**La notion de la legitime defense et sa place dans le systeme juridique// The Scientific Heritage. Budapest, Hungary. № 70 (70).P.36-39.
49. **Казанчян Л.А., Костанян Г.С.** Соотношение понятий “гражданское неповиновение” и “правосознания”// Научный журнал “Юридический факт”, Кемерово, Вып. N142. 2021.P.3-6.
50. **Kazanchian L., Kostanyan G.**Caractéristiques de la relation entre le statut juridique d’un individu et la mise en oeuvre de la défense nécessaire. The Scientific Heritage. Budapest, Hungary. № 71 (71). P.29-32
51. **Kazanchian L.,** The legal status of an individual in russian scientific, political and legal doctrines// Wisdom.Special Issue 1(1), Philosophy Of Law, Yerevan, 2021. P.82-89 (Scopus, Web of Science).
52. **Kazanchian L.,** Features of interaction between the state and civil society in the context of the philosophy of law// Wisdom Yerevan, № 2(18), P.2021.114-119 (Scopus, Web of Science).
53. **Казанчян Л.А.,** Некоторые особенности адвокатской деятельности в эпоху модернизации и инновации// Сб. научных трудов по материалам V Международной научно-практической конференции: «Научные достижения в XXI веке: Модернизация, инновации, прогресс» 01.07. 2022, Анапа, РФ.С.64-69.

54. **Казанчян Л.А.,** Некоторые особенности права на получение юридической помощи в контексте конституционно-правовых реформ// The Scientific Heritage, Budapest Hungary, №92(92), 2022.С.33-37.
55. **Казанчян Л.А., Тасалян Л.О.**Арбитражное судопроизводство как эффективная мера защиты прав личности// Тенденции развития науки и образования, №89, Сентябрь 2022 (Часть 4), Самара, РФ, 2022.С. 22-26.
56. **Kazanchian L., Malyan G.** Some Features Of The Interaction Between The State And The Individual//The Scientific Heritage, Budapest, №93(93),2022.P.37-41.
57. **Kazanchian L., Malyan G.** Some Aspects Of Citizenship In The Context Of The Relationship Between The State And The Individual// The Scientific Heritage, Budapest, №101(101),2022.P.45-47:
58. **Kazanchian L., Zakaryan A.** Некоторые аспекты конституции в демократическом государстве// The Scientific Heritage, Budapest, №104 (104), 2022.P.61-63.
59. **Hakobyan N.,Petrosyan L., Kazanchian L., Khachatryan A.**Social-Psychological And Legal-Philosophical Characteristics Of Personality Anomie //Wisdom, Yerevan, №4(24). 2022 (Web of Science).P. 48-55.
60. **Kazanchian L., Zakaryan A.** Some Features Of The Manifestation Of Legal Limitation Of State Power// "BULWARK OF LAW" Scientific-Methodical Journal Of The Police Educational Complex Of RA, №1, 2023.P. 143-152.
61. **Kazanchian L., Malyan G.**Characteristics Of Mutual Responsibility And Obligations Between The State And The Individual In A Legal Democratic State// "Katchar" Scientific periodical, Yerevan, №2, 2023, 58-70.P. 58-69.
62. **Kazanchian L., Zakaryan A.** Human rights and freedoms as a means of legal limitation of state power//Region and the World. Yerevan, № 4. 2023.P.22-27.
63. **Hakobyan N.,Kazanchian L. Khachatryan A.** Teaching Critical Thinking Among Students: Research Models And Anomie//Scientia Paedagogica Experimentalis. Belgium. Vol. 60, Issue 2. 2023, P. 215-236. (Scopus).
64. **Grigoryan S.R., Hakobyan N.R., Kazanchian L.A. Khachatryan A.G.,** Modern and Historical Parallels of Perception of Anomie in Armenian Society//"Cultural-Historical Psychology".M.,Vol. 19, № 3, 2023. P. 64-71(Scopus, Web of Science).
65. **Kazanchian L., Mirzakhanyan M.**Some Aspects Of Advocacy In The Context Of Constitutional And Legal Changes// Development of science in the XXI century Proceedings of the X International Scientific and Practical Conference (07-08 December 2023),Dortmund, Germany, 2023.49-55.
66. **Ղազանչյան L.** «Մարդու իրավունքներ» առարկայի դասավանդման ժամանակակից մեթոդները//«Հետազոտահեն կրթության արդի մարտահրավերներն ու զարգացման հեռանկարները» գիտական հոդվածների ժողովածու միջազգային, Գիտաժողովի նյութեր, մայիսի 31, Եր., 2024, էջ 291-299:
67. **Kazanchian L., Mailyan G**., Features Of The Historical Development Of The Relationship Between The State And The Individual// "Katchar" Scientific periodical, №1, 2024. P.120-130.

68. **Kazanchian L., Zakaryan A.** Some Features Of The Legal Regime In The Context Of Limitations Of State Power//"Bulwark Of Law" Scientific-Methodical Journal of the Police Educational Complex of RA, №1, 2024.P.227-236.
69. **Grigoryan S.R., Hakobyan N.R., Kazanchian L., Khachatryan A.G.,**Study Of Well-Being And Assertiveness Variables Among Young People// Counseling Psychology and Psychotherapy. M., Vol. 32, №3, 2024P. 116-138 (Scopus, Web of Science).
70. **Kazanchian L.** Peculiarities Of Human Rights Protection In The Context Of The Friendly-Settlement Of The European Court Of Human Rights// The Scientific Heritage, Budapest, №168 (168), 2025.P.9-13.
71. **Казанчян Л.А.** Проблемы приемлемости жалобы в европейском суде по правам человека// The Scientific Heritage, Budapest, №169 (169), 2025.P.19-23.
72. **Казанчян Л.А.** Некоторые особенности адвокатской деятельности в Республике Армения// The Scientific Heritage, Budapest, №171 (171), 2025.P.8-11.
73. **Казанчян Л.А.** Особенности защиты правового положения личности в наднациональных структурах//Science of Europe, №175(175),2025.P.10-13.

КАЗАНЧЯН ЛИЛИТ АРМЕНОВНА

ПРОБЛЕМЫ ПРАВОВОГО ПОЛОЖЕНИЯ ЛИЧНОСТИ. КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОЕ ИССЛЕДОВАНИЕ

РЕЗЮМЕ

Правовое положение личности, особенности проявления ее элементов, являются важнейшей предпосылкой становления и развития современного демократического, правового, социального государства в условиях современных глобализационных процессов. Известно, что правовое положение личности-явление сложного социального, правового значения, которое вместе со своими элементами в различные исторические периоды наделялось различными проявлениями. Следует отметить, что проблемы, связанные с правовым (конституционным) положением личности в системе отношений «личность-общество-государство» и их последствия оказывают непосредственное и существенное влияние на последовательное развитие мировой и отечественной экономики, политики и права. Не избежало их влияния и конституционное право, в структуре которого категория «правовое положение личности» является объединяющим, координирующим понятием, включающим изучение социально-правовых признаков личности как субъекта права, закономерностей ее деятельности в качестве юридического лица, основных направлений и перспектив эволюционного развития элементов правового положения личности и т.д. Следовательно, одной из актуальных задач науки конституционного права, является решение проблем социально-правового положения личности, возникающих в обществе и государстве. Наряду с этим, демократическое, правовое, социальное государство обязано гарантировать (защищать и охранять) основные права и свободы человека и гражданина. Следует отметить, что особенности правового положения личности и его элементов остаются малоизученными как в отечественной юридической литературе, так и в научно-практических и междисциплинарных исследованиях. Следовательно, теоретико-практическое исследование и анализ проблем правового положения личности позволяют находить новые решения эффективной защиты и реализации прав, свобод, законных интересов и других структурных элементов правового статуса личности. Более того, различные проявления элементов правового положения личности оказывают непосредственное влияние на становление и развитие гражданского общества, общественных движений и инициатив, которые, в свою очередь, определяют отличительные признаки проявления демократии в современном обществе и государстве. В диссертационном исследовании обосновывается авторский подход, согласно которому правовой (конституционно-правовой) статус личности составляет стержень национальной правовой системы, поскольку остальные компоненты правовой системы призваны обеспечивать автономное положение человека, его личную безопасность, права, свободы и законные интересы. Из автономного статуса личности вытекает ее социальная ответственность перед обществом и государством.

Автор впервые раскрывает социально-правовые основы и содержание понятий «правовое положение личности», «конституционно-правовое положение личности», «законные интересы личности» и других смежных категорий. Вместе с тем, в качестве научной новизны обосновывается необходимость конституционного закрепления понятия «правовое положение личности», что направлено на укрепление принципов демократии, внедрение и применение новых эффективных механизмов гарантии и защиты прав человека. В диссертации, в качестве научной новизны, обосновывается, что совокупность структурных элементов правового положения личности является социально-правовой ценностью, обладающей универсальной правовой природой и составляющей компонент конституционной системы. В свою очередь, в рамках диссертационного исследования, представлен авторский подход к раскрытию сущности деликтоспособности, а также особенностей периода ее совпадения с правоспособностью и дееспособностью личности. Более того, обосновывается необходимость изучения влияния структурных элементов правосубъектности на формирование различных видов правового положения личности. На основе анализа особенностей прав и свобод, в структуру правового статуса личности, в качестве концептуальной новизны, предлагается включить не только основные, конституционные права, но и спектр всех прав, вытекающих из международно-правовых и внутригосударственных актов. Наряду с этим, в диссертации, впервые в контексте отечественного конституционного права, исследовано и на основе ряда выводов представлено авторское определение понятия «законный интерес», а также новая концепция взаимоотношений законных интересов с субъективными правами и обязанностями личности, которая ранее оставалась вне внимания ученых-юристов. Более того, обосновывается подход, согласно которому, правовое положение личности занимает особое место в системе взаимоотношений понятий «правовое воздействие» и «правовое регулирование». В диссертации обосновывается подход, согласно которому в процессе реализации внутригосударственных гарантий правового положения личности участвуют все ветви государственной власти. В рамках исследования, в системе внутригосударственных гарантий защиты правового положения личности особое место уделяется вопросу независимости и беспристрастности судебной власти, а также проблемам адвокатской деятельности. Основываясь на проблемах, существующих в данной сфере, связанных с проявлением правового положения личности, в диссертации представлены предложения по совершенствеванию законодательтва, в рамках которых Офис общественного защитника, предлагается рассмотреть не только в качестве структуры, предоставляющей бесплатную юридическую помощь, но и регулирующей данную сферу. В диссертации представлен ряд предложений, направленных на совершенствование Конституции и действующего законодательства РА, в сфере закрепления и реализации правового положения личности и его структурных элементов.

LILIT ARMEN KAZANCHIAN
PROBLEMS OF THE LEGAL STATUS OF THE INDIVIDUAL. CONSTITUTIONAL AND LEGAL RESEARCH

SUMMERY

The legal status of an individual, the peculiarities of the manifestation of its elements, are the most important prerequisite for the formation and development of a modern democratic, legal, and social state in the context of modern globalization processes. It is known that the legal status of a person is a phenomenon of complex social and legal significance, which, together with its elements, has been endowed with diverse manifestations in various historical periods. It should be noted that issues related to the legal (constitutional) status of the individual within the system of relations "individual-society-state" and their consequences have a direct and significant impact on the consistent development of global and domestic economics, politics, and law. Constitutional law, in the structure of which the category of "legal status of an individual" is a unifying, coordinating concept, including the study of the socio-legal characteristics of an individual as a subject of law, the laws of its activity as a legal entity, the main directions and prospects for the evolutionary development of elements of the legal status of an individual, has not escaped their influence. Therefore, one of the urgent tasks of the science of constitutional law is to solve the problems of the social and legal status of the individual that arise in society and the state. At the same time, a democratic, legal, and social state is obliged to guarantee (protect and protect) fundamental human rights and freedoms. It should be noted that the specifics of the legal status of the individual and its elements remain poorly understood both in the domestic legal literature and in scientific, practical and interdisciplinary research. Consequently, theoretical and practical research and analysis of the problems of the legal status of the individual make it possible to find new solutions for the effective protection and realization of rights, freedoms, legitimate interests and other structural elements of the legal status of the individual. Moreover, various manifestations of elements of the legal status of the individual have a direct impact on the formation and development of civil society, social movements and initiatives, which, in turn, determine the distinctive features of democracy in modern society and the state. The dissertation research substantiates the author's approach, according to which the legal (constitutional) status of an individual is the core of the national legal system, since the other components of the legal system are designed to ensure the autonomous position of a person, his personal security, rights, freedoms and legitimate interests. The autonomous status of the individual entails social responsibility to society and the state. For the first time, the author reveals the socio-legal foundations and content of the concepts of "legal status of the individual", "constitutional and legal status of the individual", "legitimate interests of the individual" and other related categories. Simultaneously, the scientific novelty substantiates the need for constitutional consolidation of the concept of

the “legal status of the individual”, which is aimed at strengthening the principles of democracy, the introduction and application of new effective mechanisms for the guarantee and protection of human rights. In the dissertation, as a scientific novelty, the author substantiates that the totality of structural elements of an individual’s legal status constitutes a socio-legal value possessing a universal legal nature and constituting a component of the constitutional system. Furthermore, within the framework of the dissertation research, the author’s approach to uncovering the essence of tortiousness, as well as the features of the period of its coincidence with the legal capacity and legal capacity of the individual is presented. Moreover, the author substantiates the need to study the influence of structural elements of legal personality on the formation of various types of legal status of a person. Based on the analysis of the features of rights and freedoms, it is proposed to include not only basic constitutional rights, but also a range of all rights arising from international legal and domestic acts in the structure of the legal status of an individual as a conceptual novelty. Along with this, for the first time in the context of domestic constitutional law, the dissertation examines and presents, based on a number of conclusions, the author's definition of the concept of “legitimate interest”, as well as a new concept of the relationship between legitimate interests and subjective rights and duties of the individual, which previously remained outside the attention of legal scholars.In addition, the author substantiates the approach according to which the legal status of a person occupies a special place in the system of relations between the concepts of “legal impact” and “legal regulation”. The author also substantiates the approach, according to which, all branches of government participate in the process of implementing domestic guarantees of the legal status of an individual. Within the framework of the study, in the system of domestic guarantees for the protection of the legal status of an individual, special attention is paid to the issue of the independence and impartiality of the judiciary, as well as to the problems of advocacy. Based on the problems existing in this area related to the manifestation of the legal status of an individual, the dissertation presents proposals for improving legislation, within the framework of which the Public Defender’s Office is proposed to be considered not only as a structure providing free legal assistance, but also as a body regulating current area. In addition, a number of proposals aimed at improving the Constitution and current legislation of the Republic of Armenia in the area of consolidation and implementation of the legal status of an individual and its structural elements are presented in dissertation.